

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتاك جريدة يومية سياسية وأدبية - الثورة السؤولة وإشاعة**

1500 Լ.Ո. 76րդ ՏԱԲԻ, ԹԻԻ 221 (21563) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 1 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ԱՄԵՐԻԿԱՅԻՔ ՍՊԱՆԵՏԻՆ 46 ԻՐԱՔՑԻՆԵՐ ԵՒ ՎԻՐԱՒՈՐԵՑԻՆ ԱԵԼԻ ՔԱՆ 18 ՈՒՐԻՇՆԵՐ

Ամերիկեան ուժեր երկ գիշեր Սամարայի մէջ (Պաղտատի հիւսիսը) սպաննեցին 46 պիստոլներ եւ վիրաւորեցին 18 ուրիշներ, որոնք մեծ յարձակում մը կը գործէին ամերիկեան կեդրոններու վրայ: Ամերիկացի հինգ պիստոլներ վիրաւորուած են: Ամերիկացիք յարձակումները գտաւորուած են հրասայլ եւ թնայնօր: Ըստ ամերիկեան տեղեկատուութեան, յարձակողները փրօ Սատտամ ֆետայիներ են:

(ԱՅՓ)

ՍՈՒՏԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՇԻՐԷՆ ՆԵՐՍ

ՊԵՐՐԻ ԱՅՍՕՐ ԿԸ ՏԵՍԱԿՑԻ ՕՍԱՐ ՊԱՇԻՐԻ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպի Պրերի, որ հնգօրեայ պաշտօնակալն աջցելու թեմամբ մը կը գտնուի Սուտան, այսօր հանդիպում մը կ'ունենայ Սուտանի նախագահ Օմար Հասսան Պաշիբի հետ:

Շարժաթղթերին երկրագործութեան նախարար Ալի Հասսան Նալի, որ նաեւ կը գտնուի Սուտան, սուտանցի իր պաշտօնակիցին հետ ստորագրեց երկրագործութեան մարզէն ներս Լիրանան — Սուտան երկկողմանի գործակցութեան եւ ներդրումի համաձայնագիր մը, հովանաւորութեամբ՝ Պրերիի եւ Սուտանի Ազգային Ժողովի նախագահ Ահմէտ Իպրահիմ թահէրի:

Երէկ երեկոյան, Պրերի եւ իր գլխաւորած լիբանանեան խորհրդարանական պատուիրակութիւնը բնորոշեցան Սուտանի փոխ նախագահ Ալի Օսման թահալի կողմէ, որուն հետ քննարկեցին Լիրանան — Սուտան երկկողմանի յարաբերութիւնները:

ՀԱՐԻՐԻ - ՍԻՆԻՈՐԱ - ԺԱՐԻ ԺՈՂՈՎԻՆ ԶԵՆԱՐԿՈՒԵՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԱԳՆԱՊԸ

Քորայթէմի մէջ երէկ վարչապետ Ռաֆիք Հարիրի ժողով մը գումարեց ելեմուտքի նախարար Ֆուադ Սինիորայի եւ կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Ժարրիի հետ:

Ժողովին ընթացքին քննարկուածի առարկայ դարձան Լիրանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի պահանջները եւ համաձայնութիւն գոյացաւ հետեւեալ առաջարկներուն շուրջը:

— Լիրանանեան Համալսարանի հատուցման սնտուկին տրամադրել 2 միլիոն 300 միլիոն լ. ոսկի:

— Աւելի քան 20 տարիներ ծառայած դասախօսները կրնան օգտուիլ հատուցման սնտուկին տրամադրած օտանդակութիւններէն ու ծառայութիւններէն՝ մահուան կամ անհասկացողութեան պարագային:

— Հոգատարութիւն ցուցաբերել բոլոր այն դասախօսներուն հանդէպ, որոնք նախապէս ոչ մէկ ձեռնով օգտուած են հատուցման սնտուկին մատուցած ծառայութիւններէն:

Ժողովին ընթացքին վարչապետ Հարիրի եւ նախարարներ Ժարրի եւ Սինիորայի միջեւ համաձայնութիւն գոյացաւ, որ Ժարրի կառավարութեան յառաջիկայ նիստին ներկայացնէ սոյն առաջարկները եւ պահանջէ անոնց վաւերացումը:

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՏԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԺԸՆԵԻԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԱՅՍՕՐ

Ժընեի խաղաղութեան նախաձեռնութեան պաշտօնակալն հրապարակուածին նախօրեակին, Իսրայէլ բարկացած, զգուշացուածի հրաւերներ ուղղեց միջազգային ընտանիքին եւ իր գլխաւոր դաշնակից Միացեալ Նահանգներուն, պահանջելով, որ անոնք զօրակցութիւն չչալտեն խաղաղութեան ծրագրի մը, որ պաշտօնական զօրակցութիւն չի վայելեր:

Իսրայէլացի բարձրաստիճան պաշտօնատար մը ահաբեկչութիւնը քաջաբերելու համազօր պիտի ըլլայ զօրակցութիւնը յայտնելը Ժընեի նախաձեռնութեան: Ան աւելցուց, որ սխալ պիտի ըլլայ գնահատել արարքը այս մարտը, որովհետեւ այսպիսի նախաձեռնութիւն մը կը քաջաբերէ ահաբեկիչները: Ան դիտել տուաւ նաեւ, որ Ժընեի նախաձեռնութեան թիկունք կանգնողները վնաս պատճառած պիտի ըլլան խաղաղութեան ճամբու քարտէսին, որ կը հովանաւորուի Միացեալ Նահանգներու կողմէ:

Վարչապետ Արիէլ Շարոնի կառավարութիւնը մտահոգ է, որ Ուաշինկթըն կրնայ պաշտօնապէս զօրավիգ կանգնել խաղաղութեան այս նոր ծրագրին, յատկապէս երբ կը խօսուի ծրագրի մշակողներուն Ուաշինկթըն հասնակալն աջցելու թեման մը մասին: Կը նախատեսուի, որ Շարոն այս ուղղութեամբ իր կեցուածքը փոխանցէ ամերիկեան մասնաւոր պատուիրակ Ուիլիամ Պրոքթի: Շարոնի բանբերը ըսաւ, որ Իսրայէլ որեւէ զինուոր պիտի չկատարէ, որ կ'առնչուի իր ապահովութեան:

Ժընեի նախաձեռնութիւնը կը դատապարտուի նաեւ պաղեստինեան կարգ մը շարժումներու կողմէ, որոնց կարգին է «Աքսայի Նահապարակներու Փաղանգները», որուն կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը կը ըսէր, թէ ծրագրի մշակող պաղեստինցիները Իսրայէլի հետ գործակցողներ են: Շարժումը սպառնաց անոնց, որոնք «կը խաղան» պաղեստինցիներուն ապագային հետ:

(ԱՅՓ)

ԻՐԱՔ

ՍՊԱՆԱՑԻ ԵՒ ՃԱՓՈՆՑԻ ԴԻՒԱՆԱԳԵՏՆԵՐ ԶՈՐ ԳԱՑԻՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒ

Այն պահուն, երբ Իրաքի մէջ ամերիկեան ուժերուն հրամանատարը կը յայտարարէր, թէ անցնող երկու շաբթուան մէջ դաշնակից ուժերուն դէմ յարձակումներուն թիւը 30 առ հարիւր նուազում մը արձանագրած է եւ թէ կայունութիւնն ու խաղաղութիւնը շուտով պիտի հաստատուին, սպանացիներ եւ ճափոնցիներ եղան զոհերը երկու նոր յարձակումներու:

Ճափոնցի եւ սպանացի դիւանագետներու եւ պաշտօնատարներու սպանութիւնը փորձ մըն է Իրաքի մէջ Միացեալ Նահանգներու թշնամիներուն կողմէ հարուածելու պատրաստակամութիւնը Ուաշինկթընի այն դաշնակիցներուն, որոնք կ'ուզեն ուժ ուղարկել Իրաք:

Սպանական ուժերուն գաղտնի սպասարկութեան անդամ եօթը գործակալներ սպանուեցան Շաբաթ օր Պաղտատի չիլի ամբուստի վրայ: Սպանական ուժերը (1300 պիստոլ) կը գտնուին դէպի հարաւ տանող խաղաղ վայրերէն մէջ: Օտար լրագրող մը, որ միջադէպին վայրը հասած էր դաշնակից ուժերէն առաջ, ըսաւ, որ իսրայէլ մը իրաքցի պատանիներ ու երիտասարդներ իսրայէլի խմբիկներու շուրջ, Սատտամ Հիւսէյնը կը գովաբանէին, ինչպէս նաեւ կը կոխկոտէին դիակցութիւնը: Սպանացիները, որոնք երկու ինքնաշարժով կ'անցնէին, որ թակարդի մը մէջ առնուած են, երբ պիստոլներ արձակած են անոնց վրայ: Սպանիոյ պաշտօնատարներուն նախարար Ֆետայիբ Օրիլիօ յայտարարեց, որ շուտով Պաղտատ կը մեկնի տուն բերելու համար զոհերուն մարմինները: Իսկ վարչապետ Խոսէ Մարիա, որ



Սպանացի դիւանագետներ փոխարող ինքնաշարժը

քննադատութեան ու ծանր ճշումներու կ'ենթարկուի ոչ միայն ընդդիմադիր ճակատին, այլեւ՝ բարկացած ու ընդվզած հանրութեան կողմէ, յայտարարեց, որ այսպիսի արարքները սպանացի տեղի պիտի չտայ Սպանիա եւ պիտի շարունակէ ահաբեկչութեան դէմ պայքարելու առաքելութիւնը:

Ամերիկացիներուն դաշնակիցները երկրորդ հարուած մը ստացան այս անգամ դէպի հիւսիս՝ Թիքրիթի մէջ, ուր սպանուեցան ճափոնցի երկու դիւանագետներ եւ անոնց իրաքցի վարորդը: Ամերիկեան պիստոլակալները մը հաղորդեց, որ դիւանագետներ կանգ առած են, երբ պիստոլներ արձակած են անոնց վրայ: Սպանիոյ պաշտօնատարներուն նախարար Ֆետայիբ Օրիլիօ յայտարարեց, որ շուտով Պաղտատ կը մեկնի տուն բերելու համար զոհերուն մարմինները: Իսկ վարչապետ Խոսէ Մարիա, որ

նոնք փրկել: Յստակ չէ, թէ ճափոնցի դիւանագետները ինչու կանգ առած են վայրի մէջ, ուր դաշնակից ուժերուն դէմ թշնամական արարքները սպանացի տեղի պիտի չտայ Սպանիա եւ պիտի շարունակէ ահաբեկչութեան դէմ պայքարելու առաքելութիւնը:

Երրորդ միջադէպ մըն ալ տեղի ունեցաւ Սուրիոյ սահմանին մօտ, ուր սպանուեցան ամերիկացի երկու պիստոլակալներ, երրորդը մըն ալ վիրաւորուեցաւ, երբ ճափոնցիներ իսրայէլական անոնց վրայ:

Սպանացիներուն եւ ճափոնցիներուն դէմ յարձակումները դատապարտուած են ընդվզումի ալիք մը

բարձրացուցին աշխարհի տարածքին: Երկրպական Յաննա-Ժողովի նախագահ Ռոմանո Փրոտի ընդվզումներուն դէմ թշնամական արարքները սպանացի տեղի պիտի չտայ Սպանիա եւ պիտի շարունակէ ահաբեկչութեան դէմ պայքարելու առաքելութիւնը:

Օրիլիօն հարաւային քրեացի գործարարներ սպանուեցան եւ երկու ուրիշներ վիրաւորուեցան, երբ անոնց ինքնաշարժին վրայ կրակ բացուեցաւ Թիքրիթի մայրուղիին վրայ, հաղորդեց պաշտօնակալ Սէուլ, մինչ ամերիկեան ուժերը պաշտօնապէս չհաղորդեցին լուրը:

(ԱՅՓ)

ԱՄՍԱՆԻ ՄԷՋ ՊԵՐՆՁ - ՔՈՐԷՅ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քորէյ եւ Միջին Արեւելքի ամերիկացի մասնաւոր պատուիրակ Ուիլիամ Պրոքթի Շաբաթ օր հանդիպում մը ունեցան Ամմանի մէջ, քննարկելու համար խաղաղութեան գործընթացին իրավիճակը:



Ճանդիպումին ընթացքին Քորէյ յայտնած է, որ պատրաստ է տեսակցութիւն ունենալու Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի հետ, պայմանաւ որ այդ հանդիպումը արհեստական չըլլայ: Ան աւելցուց, որ այդ հանդիպումը նաեւ անհրաժեշտ պիտի չըլլայ, եթէ Իսրայէլ չստանցնէ պատի կառուցումը, որ կ'անցնի պաղեստինեան հողերէ: Քորէյ ըսաւ նաեւ, որ այս պատրուկով համաձայնեալ խաղաղութեան գործընթացին վրայ իրաւունք չունի զոհերու մարմինները փոխարկելու: Քորէյ, որ Յորդանան կը գտնուի, երէկ հանդիպում ունեցաւ Սպանիոյ Բ. թագաւորին հետ: Հանդիպում

մաններ կը հաստատէ Շարոնի հետ տեսակցութեան համար: Պրոքթի իր կարգին շեշտած է, որ նախագահ Տարթ Պուշ յանձնարարեալ խաղաղութեան գործընթացը վերանորոգելու համար: Քորէյ անուղղակի կերպով առաջարկներ կ'ուղղէր Պուշի, որուն հետ Չորեքշաբթի օր հանդիպում պիտի ունենայ Յորդանանի թագաւորը:

(ԱՅՓ)

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԵ ԻՍՐԱՅԷԼԸ

ԳԱՀԻՐԷ, 30 (ԱՅՓ).— Իսրայէլի հետ տասնամեակներու մեր խաղաղութիւնը չի կրնար «յաւիտենականօրէն» տեսել, եթէ հրեական պետութիւնը ձեռնարկէ նոր յարձակում մը՝ նման Հոկտեմբերի յարձակումին, յայտնած է խորհրդարանին նախագահը՝ Մահմուտ Ապրաւ: «Իսրայէլ պէտք է իր հաշիւները անգամ մը եւս ընէ», ըսած է Ապրաւը «Հայասթ» թերթին: Կարելի պիտի չըլլայ սուրիացի ժողովուրդը երկար ժամանակ սանձել եթէ նման յարձակում մը կրկնուի, զոչուցանուած է Ապրաւը, շեշտելով, որ Սուրիա «միջոց ունի հակադարձելու»: Հոկտեմբեր 5ին, Իսրայէլեան օդանաւեր ուժակոծած էին պաղեստինցի զինեալներու մարզումի կեդրոն մը (ըստ Իսրայէլի), 7-ամսական 15 քմ. հրահրարեւմուտքը: Մարդկային վնասներու մասին տեղեկութիւններ չ'են տրուած:

ՊՈՒԷՅՁ ԱՎՁԱՉԱՆԳ ԿԸ ՀՆՉԵՑՆԷ ԱՂԲԱՆՈՑՆԵՐՈՒ ՀԱՐՑՈՎ

Կենսալորտի նախարար Ֆարես Պուէյպ էրէկ մտափախութիւն յայտնեց երկրին մէջ աղբերու յստակ տագնապ մը ծագելուն շուրջ։

Անդրադառնալով այն իրականութեան, թէ «Սուբլին» ընկերութեան հետ երկրին պայմանագրութիւնը մօտ օրէն կը հասնի իր աւարտին, Պուէյպ նկատել տուաւ, որ հարկ է ընշօրէն մտածել այս քայլին մասին, այլապէս երկիրը դէմ յանդիման պիտի գտնուի աղբերու լուրջ տագնապի մը։

Պուէյպ ըսաւ, որ երկրին քաղաքապետութիւնները անկարող են իրենց ներկայ պիտաճէներով լուծելու աղբերու հարցը։

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՆԵՐՔԻՆ ԳՐՈՐՈՑ ԵՒ ԲԱՂԱՔԱՆՈՒԹԵԱՆՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԲԱՂԱՔԱՆՈՒԹԵԱՆ
ՍՊԱՆԳԱՆՈՑԻՆ ՅԱՆՉԱՆՉՍԱՆ ՀԱՄԱՐ**

ԵՐԿՐՈՐԳ ԱՆԳՍՏ ԸԼԼԱԼՈՎ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ՝ ՓԿԿ ՆԱՄԱԿԱՏՈՒՓՈՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՃՈՒՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԲԱՂԱՔԱՆՈՒԹԵԱՆ
ՍՊԱՆԳԱՆՈՑԻՆ ՅԱՆՉԱՆՉՍԱՆ ՀԱՄԱՐ

Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը կը կայացնէ փակ ցամակատուփով հանրային աճուրդ՝ իրեն պատկանող սպանդանոցի մէջ մորթուող անասուններուն յանձնաձեւան համար։ Այս աճուրդը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 23 Դեկտեմբեր 2003ի կէսօրուան ժամը 12:00ին։

Դիմումները կը ներկայացուին փակ ցամակատուփով՝ համաձայն այս ցպատակով պատրաստուած պայմաններու տեսարկին տրամադրութիւններուն, որոնց կարելի է ծանօթանալ եւ այդ տեսարկներէն ձեռք ձգել քաղաքապետարանի վարչական հարցերու գրասենեակէն՝ աշխատանքի պաշտօնակցի միջոցով։ 150 հազար լիբանանական ոսկիի հասնող գումարի մը դիմաց։

Սամակցի փափաքողները պէտք է իրենց դիմումները ներկայացնեն վարչական հարցերու գրասենեակին կամ զայն ուղարկել ապահով փոստով՝ ստանալու յատուկ դրութեամբ, Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր 2003ի կէսօրուան ժամը 12:00էն առաջ։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս յայտարարութեան հրատարակութեան տեւողութիւնը պէտք չէ 15 օրէն պակաս ըլլայ։

Յայտարարութեան հրատարակման թուական. 28 Նոյեմբեր 2003:

**ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԲԱՂԱՔԱՆՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՆՈՒԿ ՍԱՐԼԵԱՆ**

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յարութիւն Պէշգեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սարգիս Միքայէլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Պապոյեան
Տէր եւ տիկին Յակոբ Աբել եւ զաւակունք
Հաղըճեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր
եւ հարազատին՝

**ԱՍՏՂԿ ՎԱՆԵԱՆԻ
(Ծնեալ՝ Սեբաստիա)**

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 6:00ին, իր բնակարանին մէջ։

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 1 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Էջմիշի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը։

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ։
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Յակոբ Պապոյեանի բնակարանը՝ Փեհթուի, «Նաղամէ» շէնք, 4րդ յարկ, Երկուշաբթի 1, Երեքշաբթի 2 եւ Զորեքշաբթի 3 Դեկտեմբերին։

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Նելսոն Թնկերեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Ուսամա եւ Ռիթա Մհաննա
Տէր եւ տիկին Սամիր եւ Սիրվիտ Տէյպալ եւ ընտանիք
Լուսի Կոչէրեան
Անի Կոչէրեան
Տէր եւ տիկին Յարութիւն Թնկերեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վահէ Թնկերեան եւ զաւակունք
Տիկին Արուսեակ Մուրաթեան եւ զաւակունք
Տիկին Ալիս Կրէկըր
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ,
մեծ մօր եւ հարազատին՝

ԱՆԻ ԿԵՕՉԵՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 22 Նոյեմբեր 2003ին, Լոնտոնի մէջ։

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 1 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Էջմիշի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ։

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ։
- Ցաւակցութիւնները պիտի ընդունուին Ս. Յակոբ եկեղեցոյ սրահին մէջ Երկուշաբթի 1, Երեքշաբթի 2 եւ Զորեքշաբթի 3 Դեկտեմբերին առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 7:00։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԵՒԷ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐՈՒԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՒ ԿԱՐՉԱՊԵՏԻՆ ՄԻՋԵՒ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՄԲ

Երեսփոխան Մոհամէտ Ապուէլ Համիտ Պայտուն էրէկ «Լիբանանի Ձայն» կայանին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին նկատել տուաւ, որ հանրապետութեան նախագահն ու վարչապետը չհաւոր կ'ըլլան եթէ Լիբանանի դուրս գայ իր դիմաբրանած անդամայրութեանէն։ Ան դիտել տուաւ, որ կառավարութեան կազմի որեւէ փոփոխութիւն պէտք է կատարուի երկուքին միջեւ ամբողջական հասկացողութեամբ, որոշ ծրագրերի մը շուրջ՝ յատկապէս ելեմտական մարզի բարեկարգումներուն շուրջ։

Պայտուն կոչ ուղղեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի՝ դիմելու նախաձեռնութեան եւ ուղղուելու նախագահի գործիքի միջոցով Լահուտի մօտ, անոր բացատրելու համար իր տեսակէտներուն համապատասխանող կառավարութեան աշխատանքային ծրագրերին մասին։

Պայտուն շեշտեց ապաւելականացման գործընթացին անհրաժեշտութիւնը եւ ըսաւ, որ 2004ի պետական պիտեճի նախագիծին վաւերացումը ինչպէս որ է, կը նշանակէ քաղաքական սնանկացում։

Պայտուն անդրադարձաւ նաեւ թահֆի համաձայնագրին եւ ըսաւ, որ թահֆի համաձայնագիրը չի կրնար բարեփոխուիլ այլ կրնայ բարդաւածիլ։

Ան արծարծեց նաեւ լիբանանեւտերիական յարաբերութիւններուն, հարց տալով թէ ինչո՞ւ կարելի չէ Սուրիոյ հետ յարաբերութիւնները կարգաւորել։

Անհարկելով Լիբանանեան Համալսարանի դիմաբրանած տագնապին՝ շարունակուող դատաւարութիւն եւ կառավարութեան անտեսումին պատճառով, նկատել տուաւ, որ հարկ է նշեալ կացութիւնը սրբագրել։

Շրջանային առումով Պայտուն զգուշացուց պահեստիցի գաղթականները բնակեցնելու ծրագրին եւ մտահոգութիւն յայտնեց, թէ կրնան պահեստիցի գաղթականները բռնադատուիլ եթէ պիտի հրաք, պատրուակելով, թէ իրաք կարիքը ունի անոնց...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի ժողովուրդի զաւակներուն կ'ուզենք յայտնել, թէ Ազգային Առաջնորդարանը ծրագրած է Լիբանանի Ազգային գերեզմանատուններու իրավիճակը կարգաւորել եւ բարեկարգել։

Այս ծրագիրին սկզբնական եւ կարեւոր բաժինը կը կազմէ դամբարաններու կալուածագիրներու ստուգումը եւ կարգաւորումը։

Բոլոր այն ազգայինները, որոնք Ազգ. գերեզմանատան դամբարանի կալուածագիր ունին, իրենց անուան կամ անմիջական հարազատին անուան եւ կամ հետո բարեկամի մը անուան (բայց իրենց թով պահ դրուած) պարտին շրջանի եկեղեցւոյ թաղականութեան գրասենեակը ներկայանալ ամէն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00 եւ ներկայացնել։

1. Դամբարանի կալուածագիրի լուսապատճենը։
2. Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ընտանեկան իխրած քայտի լուսապատճենը։
3. Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ժառանգութեան իրաւաստիւնը ունեցող անձին անունը, ժառանգական կապը հաստատող ընտանեկան իխրած քայտ, հասցեն եւ հեռաձայնի թիւերը։
4. Կալուածագիրի անուանատիրոջ կամ անմիջական ժառանգորդի երկրէն դուրս բացակայութեան պարագային արտասահմանի հասցեն, հեռաձայնի թիւ, ե-մայլ, ե-մայլ եւ անուանատիրոջ հետ ժառանգական կապը հաստատող փաստաթուղթեր։
5. Կարելի եղած չափով արձանագրել տունեւ դամբարանի մէջ բաղուած անձերուն անունները, ազգականական կապը եւ թաղման թուականները։

ԾԱՆՈԹ. Կը խնդրուի արտասահմանի թերթերէն՝ արտատպել։

**ԴԻՒԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՂԱՐԱՆԻ**

ԳՐԱԲՈՒՄ
ՕՐ

ԼՕՒԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

20 ՄԱՐՏ 2004

ԳՐԱԲՈՒՄ
ՕՐ

ԼՕՒԻ «ԱՐՑԱՆ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՆԱԽԱՃԱՅ

25 ՓԵՏՐՈՒՄ
2004

ՆՇԱՆՈՒՄ

**ԿԼԱՏԻ
ԹՈՐՈՍԵԱՆ
ԸՈՂ
ՅԱՐՈՒԹ
ԱԼԱՃԱՃԵԱՆ**

Շաբաթ, 29
Նոյեմբեր 2003
Պէյրոս

Բարձր հովանաւորութեամբ՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 75ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ
Կը կազմակերպէ յիշատակի ցուցահանդէս

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԷԹԵԱՆԻ
20րդ դարու հայ մտաւորականներու դիմանկարներուն

Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահէն ներս։
Բացումը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 7:00ին։

Ցուցահանդէսը բաց կը մնայ 6էն 9 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 6:00։

ՀՐԱԲԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**75ԱՄԵԱԿԻ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Հովանաւորութեամբ՝

**Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ**
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 7 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 11:30ին,
«Յակոբ Տէր Մելքոնեան» հանդիսարանին մէջ։

ՀՐԱԲԵՐ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԲ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ ՄԷԿ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Շարք էրէկ Թրիփոլիի մէջ հանդիպում մը ունեցաւ Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի մէկ պատուիրակութեան հետ։

Շարք ըսաւ, որ կառավարութիւնը քննարկելիք իր օրակարգին գլխաւոր կէտը պիտի նկատէ Լիբանանեան Համալսարանի ուսուցիչներուն դասադուլը։

Շարք խոստացաւ ամենայն զգուշութեամբ եւ հոգածութեամբ քննարկել ուսուցիչներուն պահանջները։

Իր կարգին, դասախօսներու լիկայի նախագահ Շարպէլ Զֆորի վստահեցուց, որ դասադուլը պիտի շարունակուի մինչեւ բոլոր պահանջներուն գործադրութիւնը։

Շարքի բնակարանին մէջ կայացած այս հանդիպումը, որ տեւեց շուրջ երկու ժամ, առիթ մը եղաւ Շարքի եւ դասախօսներու պատուիրակութեան միջեւ գործնապէս քննարկել Լիբանանեան Համալսարանի եւ անոր դասախօսներուն կարիքներուն շուրջ։

Զֆորի հանդիպումէն ետք շեշտեց, որ դասադուլը պիտի շարունակուի եւ քննադատեց էլեւմտեցի նախարար Ֆուատ Սինիորայի յայտարարութիւնները։

Շարք իր կարգին վստահեցուց, որ Լիբանանեան Համալսարանի եւ անոր դասախօսներուն պահանջներով ոչ միայն կը պարտի կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարարութիւնը, այլ նաեւ՝ կառավարութեան ամբողջ կազմը։

Նշենք, որ լիկայի գործադիր խորհուրդի անդամ Իսաճ Սալիֆէ դիտել տուաւ, որ այս հանդիպումը կարծիքներու փոխանակման նպատակով կատարուած է եւ տակաւին գործադրուելու հանգրուանին չէ հասած։

Սալիֆէ ընդգծեց, որ լիկան պիտի շարունակէ իր դասադուլը եւ պիտի որդեգրէ նախապէս ճշդուած մագիցողական քայլեր, պահանջելով, որ բոլոր խոստումները կատարուին եւ գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններուն կողմէ։

Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի յայտարարած եւ 2 շաբաթներէ ի վեր գործադրուող դասադուլը այս շաբաթ պիտի թեւակոխէ իր երրորդ շաբաթը եւ այսօր իսկ Թրիփոլիի Լիբանանեան Համալսարանին մէջ պիտի կազմակերպէ պօրակցութեան հաւաք մը, որուն պիտի յաջորդեն նախարարներու եւ երեսփոխաններու հետ տեղի ունենալիք կարգ մը հանդիպումներ եւ ապա կառավարութեան կեդրոնատեղիին առջեւ ցույց մը՝ յառաջիկայ Հինգշաբթի։

**ՍՈՒՐԲ ՆԵԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ
ՖՈՆՏ**

●Անի Սամտրիկ Փամփաքնի 500 \$
●Տէր եւ տիկին Սագօ Սամտրիկ 500 \$

**ԱՆՄԻՋԱԿԱՆ ԾԱԽՈՒ Ե
ԿԱՀԱՒՈՐՈՒՄԸ ՅԱՐԿԱՔԱԺԻՆ ՄԸ
ՃԱՄԲՈՐԳՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ**

Պուրճ Համուտ Կիլիկիա թաղ, Սպիտակ շէնք, Ա. յարկ, 120 մետր շինութիւն, 120 մետր պատշգամբ, կալուածատիրոջ (բաժնւոյով), ինքնաշարժի կառատուն, 24 ժամ էլեկտրակաշարժի, հեռաձայնով, առանձին քրիտր, գին՝ փոխան 85,000 տուլարի միայն 42,500 տուլար։ Հեռաձայնով գիշերը՝ 01-258887 եւ 03-233978 թիւերուն։ Նաեւ կարելիութիւն կայ ամսական 500 տուլար վարձով։

ՄԱՀԱԶԴ

Տիկին Անահիտ Պաղճեան եւ զաւակը՝ Երուանդ
Տէր եւ տիկին Րաֆֆի Պաղճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վահէ Պաղճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գէորգ Վիշապեան եւ զաւակունք
Տիկին Ժիլիէթ-Չոհրապ Պաղճեան եւ զաւակունք
Թասլաքեան ընտանիք
Մարթայեան ընտանիք
Սինանեան ընտանիք
Միքիլեան ընտանիք
Ռազուզ ընտանիք
Ժապարկ ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մտուանոյն,
հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ԱԼՊԵՐ ԺՈՋԷՖ ՊԱՂՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 29 Նոյեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 1:00ին։

Յուշարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 30 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Փեհթուիի Հայ Կաթողիկէ պատրիարքարանին մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Հազմիէի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը։

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ։
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Հայ Կաթողիկէ պատրիարքարանի սրահին մէջ, Երկուշաբթի 1 եւ Երեքշաբթի 2 Դեկտեմբերին, առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00։

Հ.Յ.Գ. ԼԵՄԻ «ՀՐԱՅՐ ԴԺՈՒՔ» ՄԱՍՆԱԳՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԵՐ

«ՀԱՅ ԴԱՏԻ ԴԻՄԱԳՐԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱԿՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ՇԱՀԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ՝ ԷՇՐԵՖԻԷԻ ՄԷՋ

Հ.Յ.Գ. ԼԵՄԻ «ՀՐԱՅՐ ԴԺՈՒՔ» մասնաճիւղի կայանակերպութեամբ, էրէկ, Կիրակի, 30 Նոյեմբերի երեկոյեան ժամը 7:30ին, Էշրեֆիէի «Տիրան Պապիկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ շահեկան ձեռնարկ մը՝ «Հայ Դատի դիմագրութեամբ մարտահրաւիրներ» թեմայով:

Բացման խօսքը արտասանեց Նանոր Գարակէօյեան, որ անդրադառնալով Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն ըսաւ, թէ թէեւ պանապան պետութիւններ ձանձրան հայկական Յեղասպանութիւնը, սակայն թշնամին կը շարունակէ ռուսալ պայն: Ան լուսարձակի տակառնելով Հայ Դատի մարմիններուն երկարամեայ բեղուն գործունէութիւնը դիտել տուաւ, թէ այս աշխատանքին մեծ հարւած կը հասցնեն Հայ Դատին նկատմամբ անտարբեր կեցումը ցուցաբերողները: Խօսելով այս հատուածին մասին Ն. Գարակէօյեան ըսաւ, թէ անոնք մեծապէս կը վնասեն Հայ Դատին, քաջալերելով թրքական արտադրութիւնները, պօսաշրջութիւնը, մշակոյթը, ինչպէս նաեւ թուրքին հետ հաշտութիւն հաստատելու նպատակով նախաձեռնութիւն կատարելով:

Սակայն հակառակ այս բոլորին, Հ.Յ.Գ. պատանեկան եւ երիտասարդական միութիւններուն համար նպատակը յստակ ու մեկին է, հաստատեց ան. բոլոր միջոցներով

շարունակել պայքարը թուրքին եւ անոր դաշնակիցներուն դէմ, այնքան առեն որ ամբողջական հատուցում չէ կատարուած Հայկական Յեղասպանութեան, հայ ժողովուրդին հողերը չեն վերադարձուած ու հայութիւնը չէ համախմբուած իր հայրենի հողին վրայ:

Գեղարուեստական բաժինով հանդէս եկան Անոյշ Գերպապեան՝ սամուրով, Խակ Շաքէ Պաղտասարեան՝ ազգային երգերով, ընկերակցութեամբ Սեդո Պաղտասարեան:

Այս ցուցադրուեցաւ վիտէօ-երիպ մը, որ կը ներկայացնէր Հայկական Յեղասպանութեան մինչեւ օրս Հայ Դատի հետապնդման աշխատանքները, արձանագրուած իրագործումները եւ հայութեան դիմաց ցցուող մարտահրաւիրները:

Օրուան բանախօսն էր ընկ. Յակոբ Բագրատունի, որ մանրամասն կերպով ներկայացուց հայութեան եւ յատկապէս հայ երիտասարդութեան դիմաց այսօր ծագող մարտահրաւիրները եւ պանոսք դիմագրութեան միջոցներն ու ձեւերը:

Ան հաստատեց, թէ հայ ժողովուրդին առջեւ մնալուն կերպով մարտահրաւիրներ գոյութիւն ունեցած են, սակայն հիմնական եղած է նետուած ձեռնարկը վերցնելն ու ազգովին պայքարիլը: Պատմութիւնը ցոյց կու տայ, թէ հայ ժողովուրդը կրցած է պայքարիլ ու յաղթանակել երբ



Յ. Բագրատունի

վստահած է իր ուժին, իր համոզումներուն եւ ազգովին մէկ բռունցքի վերածուած կրցած է «ոչ» ըսել պինք վտանգող եւ իրեն սպառնացող երեւոյթներուն, հաստատեց բանախօսը:

Հայոց պատմութեան մէջ պարտութիւնները շատ ատելի եղած են քան յաղթանակները, դիտել տուաւ Յ. Բագրատունի եւ շեշտեց, թէ այդ յաղթանակները աշխարհային տարածքները հայ ժողովուրդի գոյատեւման եւ ինքնութեան պահպանման:

Անդրադառնալով անկախ Հայաստանի, Արցախի, Ջաւախքի մէջ տիրող ներկայ կացութեան եւ Սփիւռքի մէջ ապրող հայութեան, Յ. Բագրատունի ըսաւ, թէ տակաւին պանապան մարտահրաւիրներ եւ սպառնալիքներ գոյութիւն ունին թէ Հայաստանի եւ թէ Սփիւռքի մէջ:

Այս մարտահրաւիրներուն մասին խօսելով բանախօսը շեշտը դրաւ Հայաստանի եւ

Արցախի անբակայման խնդիրն վրայ եւ ըսաւ, թէ այս մէկը կ'իրականանայ առաջին հերթին մեր հայկականութեան կառչած մնալով, պայքարելով յոռի երեւոյթներուն եւ փտածութեան դէմ եւ ազգովին համոզուելով մեր հողերու ամբողջականութեան ձեռքբերման անհրաժեշտութեան: Այս առնչութեամբ ան շեշտեց Ջաւախքի պարագան, որ վրաստանի մէջ տիրող անկախ

Շար.Ն Էջ 10

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սոսի Մալիսազալեանի մահուան առիթով, Ազգային Ս. Խանգամիսեան քոլեճի սնօթման կոմիտէի, ուսուցչական կազմը եւ պաշտօնակիցները 125,000 Լ. ռ. վարձարանով կարիքաւոր սաներու ֆոնտին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սոսի Մալիսազալեանի մահուան առիթով, տեղի տրուեց 50,000 Լ. ռ. եւ տեղի տրուեց 50,000 Լ. ռ. ԼՈՍԻ «Մեղրի» մասնաճիւղին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՅՈՒՄ



Ashnaq

Հովանաւորութեամբ ԼՈՍԻ Շրջանային վարչութեան, կազմակերպութեամբ ԼՈՍԻ Ձեռարուեստի Յանձնախումբին եւ նախագահութեամբ վարչուհի Տէրէմէն Տէրաթի, 29 Նոյեմբերի երեկոյեան ժամը 5:00ին, Այլքայի «Փրոմընտ» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Հայկական ձեռագործներու ցուցահանդէսի բացման հանդիսութիւն:

ԼՈՍԻ Ձեռարուեստի Յանձնախումբին անունով խօսք արուեց Սեդո Չօբէճեան, որ հաստատեց, թէ ԼՈՍԻ ընդհանուր կազմակերպութեան ի վեր եղած է այն միջնորդը, որ գործած է յանուն Հայութեան եւ Հայկական արժէքներու պահպանման: Ան նշեց, թէ այս գործընթացին մէջ Հայ կիները ունեցած է իր իւրաքանչիւր դերակատարութիւնը եւ իր մասնակցութեամբ երաշխաւորած է Հայ տան պահպանումը եւ Հայ մշակոյթի ու արժանիքներու փրկութիւնը: Հայօրէն շնչելու եւ Հայութեամբ լիցքաւորելու իր ճիշդ մէջ Հայ կիները պահած ու պահպանած է նաեւ Հայ ձեռարուեստը, որ ինքնին արուեստ է եւ ոչ լոկ գարդ:

Այս նպատակով է, որ ԼՈՍԻ Շրջանային վարչութիւնը կը պահպանէ Հայկական ձեռարուեստը եւ

այս ուղղութեամբ լայն աշխատանք կը տանի, նշեց Ս. Չօբէճեան եւ շեշտեց, թէ Հայ կիները քաջալերանքով եւ աշխատանքով աւելի եւս յաջող ու արդիւնաւէտ կը դառնայ այս ճիղը: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա. վեհափառին եւ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի գնահատանքն ու յարգութեամբ մարտնչութեամբ փոխանցեց Նորայր վրդ. Աշրգեան, որ նշեց, թէ զուտ արուեստի բնույթ ունեցող երեկոյին յարգութեան ետին կանգնած են նուիրեալներ, որոնք կը գիտակցին ծառայելու եւ ազգային արժէքները պահպանելու անհրաժեշտութեան:

Ան հաստատեց, թէ արուեստը ժողովուրդին կենսաբան հայելին է, ուր կ'արտացոլայ անոր արժէքները եւ պայքարելու, ապրելու եւ ստեղծագործելու ոգին ու վճռակամութիւնը:

Նորայր վրդ. Աշրգեան գիտել տուաւ, որ գործը մը նուիրակն է երբ ան կը Հետապնդէ վեհ ու անձնական շահերէ վերնպատակներ եւ աւելցուց, թէ ԼՈՍԻ կանանց անդամներուն հաջողութեամբ կ'արտացոլուի:

գործունէութիւնը կենդանի մէկ օրինակն է այս երեւոյթին: ԼՈՍԻ ծնունդ առած է ժողովուրդէն եւ միշտ գործած է յանուն ժողովուրդին, ազգին, եկեղեցիին եւ Հայապահպանման, աւելցուց ան:

Ձեռարուեստը մեզի կը փոխանցուի հինէն եւ իր Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի գնահատանքն ու յարգութեամբ մարտնչութեամբ փոխանցելու պարտականութիւնը, ըսաւ Հայր սուրբը:

Այս ցուցահանդէսը այդ ատենուցիկ պահպանման գլխաւոր կողմերէն է յիշատակը, հաստատեց ան եւ անդրադառնալով ԼՈՍԻ գործունէութեան արուեստը, թէ անոր աշխատանքները միշտ արտուած են արտանց ու ամբողջ հոգւով, եւ այդ պատճառով այդ արդիւնքը միշտ եղած է գեղեցկութեամբ եւ նուիրականութեամբ ի, եզրափակեց Նորայր վրդ. Աշրգեան:

Իւրաքանչիւր Հայկական ձեռագործներով հարուստ այս ցուցահանդէսը բաց կը մնայ մինչեւ Կիրակի, 14 Դեկտեմբեր, ամէն օր ժամը 10:00էն երեկոյեան ժամը 19:00:

«ԿԵՆՔ ՄԸ ՓՐԿԵՆՔ» ՖՈՆՏԻՆ

Սոսի Մալիսազալեանի մահուան առիթով, տեղի տրուեց 50,000 Լ. ռ.

Advertisement for LBC featuring a woman's portrait and text about a contest or event.

Advertisement for Ashjan Tours featuring a plane and text about travel packages.

Large advertisement for Panasonic electronics including TVs, DVD players, and digital video cameras with prices.

Panasonic ideas for life

ՆԱՄԱԿԱՆԻ

Հոգեկամ մեծ գոհունակութամբ, Հինգշաբթի, 27 նոյեմբեր 2003ին, անշարժացանք պատկերասփիւղի պատուհանում առջև, հետեւելու համար Արցախի Հիւսիս-Զարա մայրուղիի մոտ կրթական կենտրոնում ծնունդ առնող Ժուլիանային, որ տեղի կունենան Ամերիկայի Միացյալ Նահանգներու Քալիֆորնիա նահանգի մեջ:

Պատիւ է հայագից համար, որ այս օգտաշատ ծնունդը վերածնց աւանդութեան, եւ որ կը շարունակուի անխափան 8 տարիներէ ի վեր: Ցանկալի է նաեւ, որ այս անհոգութիւնը կրկնուի, քանզի ատեն որ Արցախն ու Հայաստանը կարող ունին ներթափանցելու միմեկու պատասխանատուութեան, գոր սփիւռքահայերը մեծ խանդավառութեամբ կը վճարեն իրենց սրտատու զազային տուրքը:

Դժբայտաբար լիբանանահայը, որ կը յաւակնի ըլլալ Միւրճի զգայալը, որ կը յաւակնի ըլլալ Արցախի իր պարտքը կենդանի մնալու համար: Այս զգայալը կը յաւակնուի իր իրենց մասնակցութիւնը բերելու:

Այս գիշեր, պատկերասփիւղի պատուհանում առջև պարզեց հակադիր զգացումներ: Անո՞ր գոհմանը մեծ մէկ միտքով, որ մէկ կուսակցութիւնը, ոչ մէկ կուսակցութիւնը, ոչ մէկ կուսակցութիւնը միատեղ գործադրութիւնը իրենց լիբանանահայեր, այս անտարբեր կեցւածքին համար:

Անխուսափելի շարք մը հարցումներ իրենց գիրենք կը պարտադրեն:

- Արդեօ՞ք լիբանանահայութիւնը Միւրճի մաս չի կազմեր:

- Արդեօ՞ք լիբանանահայութիւնը մտնողներու թիւում կը տեղադրուի:

- Եւ հարցումներու շարքը երկար է...

Մինչեւ էր պիտի շարունակուի մեր այս անտարբերութիւնը:

ԼԻԲԱՆԱՀԱՅ ՄԸ

ՎԵՐԱԿԱԶՍԱԿԵՐՊՈՒՄԸ
«ԹՈՂՆՈՅ ԲՈՅՆ»Ը

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ ՆԵՐՇՆ ԼԵԿԸ

Հոգեւոր, քաղաքական, կրթական թէ՛ մշակութային բնագավառներուն կողքին, ընկերային ծառայութիւնը կարեւոր մէկ երեսը կը ներկայացնէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գործունէութեան: Այս շրջագիծը մէջ Արամ Ա. կաթողիկոսի անմիջական հովանաւորութիւնը վայելող հայկական միակ որբանոցը «Թոլնոց Բոյն»ը Հիբանանի մէջ, հայերու ցեղասպանութեան ժամանակաշրջանին սկսեալ կը գործէ մեր ժողովուրդի կեանքին մէջ՝ հոգատար մըր հանդիսանալով գուրգուրանքի կարօտ հայ մանուկին:

Միաբան հայրեր թէ՛ աշխարհական պատասխանատուներ, խնամակալներ թէ՛ ուսուցիչներ անցնող տասնամեակներուն գնահատելի դեր կատարեցին «Թոլնոց Բոյն» ծառայութիւնը աւելի կենսազորեցնելու իմաստով:

2003-2004 տարեշրջանը «Թոլնոց Բոյն»ի վերջին շրջանի պատմութեան մէջ պիտի յատկանշուի իրեն վերակազմակերպման շրջանը:

Վեհափառին անմիջական հովանաւորութեան ներքեւ ու տնօրէն Հայր սուրբին՝ Շահէ Ծ. վրդ. Փանոսեանի ու խնամակալ մարմինի համախոհ գործունէութեան իրեն արգելք, տարուան ընթացքին հիմնական փոփոխութիւններ կատարուեցան հաստատութեան մէջ: Արդարեւ, աշխարհութեան կենսակրթական մասնագիտութեան արգելք, ուսուցչական կազմին ու պատասխանատուութեան մէջ տեղի ունեցած մեծ փոփոխութիւններով եւ բնակութեան պայմաններու զգալի յառաջդիմութեամբ, «Թոլնոց Բոյն»ը մեծ չափով կերպարանափոխուեցաւ:

Ամէն բանէ առաջ, «Թոլնոց Բոյն»ը յատուկ դիմագիծ ու առաքելութիւն ունեցող հաստատութիւն մըն է: Պէտք է հաւատարիմ գտնուիլ հաստատութեան իւրաքանչիւր առաքելութեան եւ հոն ընդունելի այնպիսի մանուկներ ու պատանիներ, որոնք կարիք ունին ընտանեկան խնամքի: Այս գծով խնամակալութիւնը դիմեց շարք մը գործնական քայլերու:

Կրթական ծրագրի յապաղած վերանայումը կը տարբերէր վարժարանին ուսումնական կեանքը, տեղւոյն հայկական թէ՛ օտար վարժարաններէն: Ուրեմն, լաւագոյն կրթութիւնը շատ բարձր համար եկեղեցւոյ ու ազգային խնամքին յանձնուած աշակերտութեան՝ ամէնօրեայ դրութեամբ նախակրթարանի աշակերտութիւնը կը փոխադրուի Ազգ. եղիշէ Մանուկեան Գոլէճ, եւ դասուանողութեան ետք կը վերադառնայ իր տունը՝ «Թոլնոց Բոյն»: Մանուկապարտէզի բաժնով, որ իր դասուանողութեան ներկայ Թոլնոցի հաստատութեան մէջ, օժտուեցաւ իր մասնագիտութեան համապատասխան վկայական ունեցող մանկավարժներով, իսկ խնամատար մայրերու պարտականութիւնը յանձնուեցաւ Գայիանեան ջոյրերու միաբանութեան անդամներուն:

Քոլորիոն ծանօթ է, որ ազգային-եկեղեցական շատ մը հաստատութիւններու նման, «Թոլնոց Բոյն»ը եւս կ'ապրի եւ կը գործէ մեր ժողովուրդին կողմէ ընծայուած կարեկրկնութիւններով եւ միջոցներով: Յատկապէս սերունդական ներկայ ծանր պայմաններուն տակ, սոսորդներուն ու խնամակալ մարմինի համար շարունակական մտահոգութիւն է «Թոլնոց Բոյն»ի տարեկան աւելի քան կէս միլիոն տոլարի պիտուէն գոյացնելու հարցը:

Այս տարեշրջանը նաեւ յատկանշուեցաւ շինարարական հսկայ աշխատանքներով: Վեհափառին հրահանգով կաթողիկոսարանի կալուածոց յանձնախումբը վերանորոգման ենթարկեց աշխարհային համար գործածական եղող գրեթէ բոլոր յարկաբաժնիները: Ներկուեցան նշարանները, խոհանոցը, ճաշարանը, հանդերձատունը, հիմնովին նորոգուեցան լուսացարանները, բաղնիքները, բոլոր դռներն ու պատուհանները, ջեռուցման սարքերը, էլեկտրականութիւնը բաշխող ցանցերը եւ արտաքին ու ներքին լուսավորման պայմանները, ու խոհանուրթեան առաջը անելու համար կուպրապատուեցան տանիքները: Ամբողջութեամբ վերանորոգուեցաւ բանջարեղէնի ջրամանուկը եւ ցանք կատարուեցաւ ծովափնեայ բանջարանոցներուն մէջ՝ ձմրան երանակին առատ բանջարեղէնով ճոխացնելու համար պատասխանատու մանուկներուն սննդառութեան պայմանները:

Յառաջիկայ շրջանին տնօրէնութեան ու խնամակալ մարմինի նախաձեռնութեամբ նաեւ պիտի ձեռնարկուի «Թոլնոց Բոյն»ի ժիպէյլի ու թրգայայի ամարանոցի ընդարձակ կալուածները լաւագոյնս օգտագործելու աշխատանքին:

Աստուածահաճոյ այս աշխատանքին մէջ մեծ է դերը մեր ժողովուրդի գաւակներուն, որոնք իրենց ժամանակին, կարողութեանն ու քսակէն բաժին կը հանեն «Թոլնոց Բոյն»ի հայ մանուկներուն: Շնորհակալութիւն բոլոր այն ազգայիններուն, որոնք օգտակար դարձան մեզի եւ կանխապայտ շնորհակալութիւններ բոլոր անոց, որոնք պիտի մասնակցին մեր աստուածահաճոյ ու ազգային ծառայութեան:

Ձեր կատարելիք նոր նուիրատուութիւններուն ու քաջալերանքին կը սպասեն «Թոլնոց Բոյն»ի մանուկները, որոնք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ու մեր ժողովուրդի խնամքին յանձնուած են՝ ապագային մեր ազգի կեանքին մէջ իրենց ներդրումը ունենալու: Որքան կարողականութիւններ, ձիւրքեր, ապագայի հեռանկարներ եւ յոյսեր թաքնուած են անոց աչքերուն մէջ:

Միրելի՛ հայրդդի,
Բեր՛ նպաստդ, ու Աստուած պիտի վարձատրէ քեզ երախտարժան գործիկ համար:

ՄՍՈՐՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ԵՐԹԸ ԱՅՍՕՐ
ԿՐՔՈՏ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԺԻՏՈՒՄԻՆ ԴԷՄ

Համաշխարհային ամբողջ կարգն ու սարքը պարփակող արդի ընկերութիւնը իր լայնկեկ շերտաւորումներով կ'ենեւեփի բազմաձաւառ ուղղութիւն ընդգրկող յորձանուտին մէջ: Մօտակալ հորիզոնին համայնապատկերը խարխիփալ իրավիճակ կը պարզէ: Չոր դարը թեւակոխող իրենթաշարք սերունդներ՝ պարտադրաբար կ'ապրին գոյութեան կենսական իրենց հանապազօրեայ հենքը, ճնշելու ու հոգեմահա տօրեային փախուստ տանալու անոց անգոր փորձերը կը բախին արմատացած հողը համայնի զոքայասունմանը, սլայակն ազատամիտ եւ «հոգեզրայ» լորձնաշուրթն լոգուկներու պատանդ դառնալով:

Միւս կողմէ, քաղաքակրթ. եւ մարդկայնական վերաբերմանով յատկանշուող իրաւակարգերու եւ հոսանքներու իրենթաշարք տարազաւորումները թէ՛ եւ կ'արձագանգեն աշխարհաքաղաքական եւ ընկերատնտեսական նորոգեալ հայեցակարգերու հաստատման գործընթացներու մէջ, այսուամենայնիւ, հեռանքը կարային եւ կ'առուելիքներու մտքի ու համակարգի անբարեկապատ բացակայութիւնը, յաւելելով ուժերու լարում, գործնական եւ ոչ պատեհապաշտ առաջադրանքներու որդեգրում եւ համազգային ստեղծարար կարողականութիւններու համարումը կ'ենթադրէ, յատկապէս ներազգային ու պետական կեանքի մակընթացութիւններու անդաստանէն ներս:

Յայտնապէս, ինչ իսոք պետական ու վարչազիտական մակարդակներու ծիրէն ներս, երբ ազգային պահանջատիրական երթին բնորոշ մարգերը յստակ են ըստ ամենայնի: Այդ երթին խափանման բազմապիսի փորձերն ու զրբեւորումները պակասը են իրենց պատճառական եւ դրութեան կենսական ձեւաւորումներով, եւ որոնց դէմ կանգնելու, զանոնք մասնատելու առհաւական ինքնագիտակցութեան ճշգրտաշիջ նախարդեանքները միահնամբմը միշտ վերահաստատուելու հրամայական պահանջներն առնել կը գտնուինք ազգովին, եւ այդ տեսադաշտին հիմքը հանդիսացող ներքեանազգային իր առկայութեամբ հայ քաղաքական միտքը առհասարակ:

Ի դէպ, ինքնահաստատ ազգերու պատմաքաղաքական յարափոփոխ են յաճախ շեշտաւորելով պատմութեան ճշգրտութիւնը իրարեւել հետազայ սերունդներ, որոշակի կացութիւններու դէմ յանդիման՝ կ'ունենան ինքնաստեղծումի հոգեվիճակային հանգրուաններ, բարոյա-հոգեբանական բնական հակադեցողութիւններ, վանողական արտայայտութիւններ, սակայն ենթարկուելով ինքնազննումի եւ ներհայեցողական ժամանակային որոշ թաւալումի, անոնց հոգեմտային աշխարհին մէջ անպայման որ կ'ուրուակծուին ազգային պատկանելիութեան բացառակի արժեքն ու հասկացողութիւնը, իրաւախոհութեամբ տոգորուել է իր շրջապատին յատուկ ուշադրութեան եւ գործվալից վերաբերումին արժանանալէ ետք:

Այլ առումով, հայ քաղաքական մտքի վերընձիւղման ռահվիրայ ընդմիջեան Հայրիկի բովանդակալից պատգամը յաւերժահունչ է իր թողած ազդեցողութեամբ: Հայ ժողովուրդի արդի պատմութեան Պերիլին Վեհաժողովի առթած հեղեցնիչ քաղուածքը թէ՛ եւս եւ իր շօշափելի եւ արդար ձեւաւորումը գտաւ հետագայ սերունդներու մօտ, այսուհանդերձ, ընդմիջեան Հայրիկի ցուցաբերած ազգադրոշմը եւ բիւրեղացած ազգային դադափարախօսական լոգոսը, փաստօրէն, ամբարքեց մեր ժողովուրդի դոյներին ամբողջ յենակէտային ուսմանովորումութիւնը, արժանաւժայել եւ իրազարկութեամբ շարունակելու ազգային ու մարդկային մեր առաքելութիւնը համաշխարհային խառնափնթոր ռազմաքաղաքական հետազայ տանսմանակներուն:

Ազգային լինելութեան հարիւրամեայ վերջին հոլովոյթը պահանջատիրական մեր երթին լաւագոյն եւ վաւերական պայցոյցն է, ժողովրդային-պայատմբական, ֆետրայական, ցուցական-ահաբեկչական իր երանդաւորումով, որոնց բնական անդրադարձը կը հանդիսանայ վեցհարիւրամեայ ստրկամտութեանն ընդհատ օտայութելու ցեղային առանձնայատկութեան բորբոքումը, եւ որոնք վարակիչ ընդոյթին ահապատե յեղանք ազգովին Արցախեան զօտեպիզիչ պատմագրական պայթումով ընթացք առած համահայկական վերադարձումը:

Դժբայտաբար, սակայն, որոշ ժամանակներու պատմաքաղաքական յաջողական իրադրութիւններու իրենք է արդիւնք, ընթացած ենք այնպիսի ուղղութեամբ, որ հակուրտենայ երեւոյթներու եւ կեցողածքներ որդեգրելու անողը կացութիւններու մէջ գտնուելով, շատ անգամ եւ անարդարորէն ազգային հեզահամբոյր եւ կոթողային արժեքներն անգամ ստորադասած ենք անձան-ենթակայական նկրտումներու հաշուին: Անմընացողը գոհաբերութիւններու, անգնահատելի մարտնակութեամբ եւ սիրագործութեամբ նուաճուած 1918ի Մայիսեան փառահեղ յաղթանակն անգամ իր խտացուած գաղափարական լիցքով եւ հաւատոյ հանդանակով խթանանքի առարկայ դարձած է, աւելին՝ թուրքիին թրքութիւնն ու հայատեաց մոլեգնութիւնը պահ մը շուքի մէջ թողելով, գրազած՝ տարբեր պիտակի լիրդ դիտաւորութիւններով:

Նմանօրինակ պահերու, ազգային ազնուազրոշմ հոգեխառնուածքը ունեցած է իր շինիչ դերակատարութիւնը: Տուեալ ժամանակներու դառնագոյն օրերուն, ազգը ծնունդ տուած է առաքելատիպ հայրդիններու զանազան բնաւազատներէ ներս, որոնք անսլով առհաւական ներքին ձայնին եւ ուժին, ստեղծագործ կարողականութեան եւ յանձնառութեան՝ մասնակիւ եղած են պայթարի տարբեր արտայայտչամիջոցներու, ազգային միջագնաց երկնայնամարը լուսաւորելով եւ պատմակիւ հանգրուաններուն՝ հունաւորելով ազգային պահանջատիրական երթը, անփոքաթիւութիւնը ապացուցելով ազգային գոյամարտի շարունակելիութեան:

Որոշապէս, Հայաստանի վերականխացման յաջողող տարիներուն, որչափ կ'են պետական մտածողութեան ընթացքի կարգաւորումներն ու ազգային գաղափարախօսութեան շատագով կարգ մը պետական տարբերու յառաջընթաց գործունէութիւնը, սակայն, ազգային պահանջատիրական երթին անընդանգելի կերպով

ազդեցուած՝ պետական-քաղաքական մշակոյթի եւ համակարգի աւելի արդիւնաւէտ գործընթացներու կարիք կը զգացուի, հայ ժողովուրդի առաջնորդութիւնը ստանձնած ղեկավարութեանն, ի Հայաստան եւ աշխարհացրիւ բեկորներու մօտ, պարզապէս անցեալի անհեշտութիւն «յանցագործութիւն»ներու կրկնբերւոյթը չապրելու միտումով:

Հետեւաբար, ուրույն մտածելակերպի, տիրական աշխատանքի, թափանցիկ եւ ազգային կերտուածքի գործունէութեան առաւել աշխուժացման հրաւիրում է հայ ազգային քաղաքական մտքի անդաստանին մէջ ներդրած ղեկավար տարրը, առանցքային տեղ շնորհելով հարձակումի պահանջատիրութեան, եւ այդ երթին համազգային պահանջատիրութեամբ, եւ այդ երթին աւելեւ եւ եռանդ մատակարարող երիտասարդութեան, որ արդարօրէն կ'անկախ իրեն վերապահուած դերակատարութեան ջրեղբունին, խանդավառ եւ բոլորակուծ իմաստութեամբ յանձնառելու ազգին դիմազրաւած մարտահրաւէրներու սրբագան եւ անյետաձգելի աշխատանքներուն:

Ապահովաբար, իւրաբանչիւր սերունդ իր ազգադրոշմը եւ վերասլաց գաղափարական ուղղութեամբ իր ներդրումը ունեցած է ազգային զանձարկիչ հարստացման մէջ, ճշգրիտ ետք իր առաջնահերթութիւններն ու անմիջական պայթարի ռազմավարական ուղղութիւնները, որդեգրելէ ետք համապատասխան եւ նպատակահետապիսի միջոցաւորումները, եւ, էական, քաղաքական ազգային շնորհութեան սնուցիչ դերակատար վճարակութիւնը:

Վտարանդի սփիւռքահայը, շնորհիւ իր անասման հայրենասիրութեան, կենսուրակ պահեց հայրենիք վերականգն տեսնելու անչէջ երազը, իր լաւագոյն եւ ազնուագոյն զաւակները մտտուցելով պայթարի անբերատարուանին, եւ ժամանակի թաւալումին հետ ցուցաբերեց պայթարելու կամք եւ կըրքոտ յանձնառութիւն՝ օրրասօրէ պայթարող հայ իրականութեան դէմ, թէ՛ եւ անգոր, սակայն յամառ եւ ներուժ նախանձախնդրութեամբ տէր կանգնեցաւ մէկուկէս միլիոն նահատակներու կտակին, փորձեց վճարահատ կողմնորոշութեամբ իր ձայնը բարձրացնել միջազգային բեմայարթակ, պայթարի տարբեր մարզեր որդեգրեց՝ Հայ Դատի սպասարկման, ներագգային կեանքին մտածեց պարտուողական եւ հանցակատար տրամադրութիւններու դէմ կանգնելու հրաշայլ խանդավառութիւն: Իսկ Նազաբոյն որդի՞ ազգային պետական լինելութեան եւ յարատեւութեան խորհրդանշիչ:

Իրաւամբ, աշխարհաքաղաքական նոր դասաւորումներու եւ համաշխարհային թրոնաւորութիւն մէջ, ազգային պահանջատիրական գործընթացը կ'ապրի վերիվարուածներու պահանջ, ազգային կառուցուելու վերանորոգման անհրաժեշտութիւնը՝ անմիջական, ղեկավար տարրին մօտարդի կեանքի մտածողութիւնը ընդունելու պատրաստականութիւնը՝ անյետաձգելի, ու մասնաւոր՝ ազգային մեր կեանքը լուսօրէն կոտորացող փտածուցներուն, ջնջականութեան, շահախնդրի եւ պարզամտ տրամադրութիւններու տէր անհատներու հեռացումը ազգային պարտաւորութեանն:

Սփիւռքահայ գանգուածը տակաւ կը շարունակէ իր երախտաբժան ազգային երթը: Գիտակից նորոգեալ ստեղծուած կացութիւններուն՝ կ'երկնէ հրաչազոր տարանդներ, որոնց լիարժեք հայկականութեամբ բոցիլուտն արաջագործութիւնները կը նպաստեն ընդհանուր տեսիլքի նուիրագործումին, իսկ Ատուծ էկոյեաններու, Փիթեր Պալանգեաններու, Ծար Աղաւաղներու եւ հայատրոփ բազում արուեստագէտներու ազգաչէն իրագործումները, յաւելելով որակ կ'ընձեռեն պահանջատիրական երթին, որ իր կարգին պատշաճեց մաս կ'արդէ ունի մերօրեայ մարտահրաւէրներուն ընկալման եւ դիմագրաւման տեսակէտը:

Միւս կողմէ, վերականխացած հայրենիքի պետական աւագանիի քաղաքականացած եւ հայրենասէր մօտեցումները իրականացած տեսնելու հայ ժողովուրդի իդձերը, ազգային մէկ պատկանելիութեան ունենալու վերաբերումներն ու մշտանորոգ յանձնառութեամբ լիցելու տարագիր հայու անկնկալութիւնները, անոնց հայ մտքի ու գործի սպասարկու հաւաքականութիւններու սրբազան պարտու, դառնալով ազգային ինքնաժխտումի դէմ իրաւապահ եւ անխոնջ հայրդիններ:

ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԵԱՆ

ԲԱՄԲԱՍԱՆԸ, ԹԵ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Իրարու մօտիկ երկու ազգակնքներ կը գրուցեն: Մեկուս ըրով փոքր գումար մը պակաս է գեղում կատարելու, կը խնդրէ միւսէն, որ փոխ տայ քանի մը ոսկի:

- Բեռի՛, ըրովդ 20 հազար տուր, ճամբուս վրայ ստուղ պիտի գնեմ:

- Բեռի՛ն գամայնք կը պատասխանէ:

- Բովդ բաւակն դրամ ունէիր քիչ առաջ, ինչ ըրիր:

- Դարոց գացի կրթաբողալի պարտքս վճարելու:

Այս անգամ քեռի՛ն գայրացած կը պատասխանէ:

- Մօ՛ ապուշ, դպրոցի՛ն դրամ կու տա՞ն...

«Հիւսնալի» մտայնութիւն հայ մարդու: Բայց մեծ մասամբ այսպէս ենք. հայերս շատ դժուար դրամ կու տանք դպրոցի՛ն, քերքին եւ գիրքի՛ն: Մեր մշակոյթին գարգացման, մեր մամուլին եւ մեր դպրոցներուն ծաղկումին համար դժուար դրամ կը յատկացնենք: Ե՛րբ խելքի պիտի գանք...

www.aztagdaily.com

ՀԱՅ ԱՐԺԷՔՆԵՐԸ ԳԵՐԻՎԵՐ Ե՞Ն ԱՅԼ ՆԿԱՏՈՒՄՆԵՐԷ

Իրա մեծերունց երբեմն կու տան խիստ դիպուկ ան-
ւանումներ: Անոնցմէ մից վառ մնացած է յիշողու-
թեան մէջ: Հայ յեղափոխութեան քուրմերէն Քրիս-
տափոր կոչած են *մարդակերտ*: Այդ օրերուն յեղա-
փոխութիւնը իսկական լիցք ունէր, քանի որ կ'երթար
դէպի ժողովուրդը, նոյն այդ ժողովուրդը ինքզինք կը
տեսներ այդ ղեկավարութեան մէջ: Չայն չէր համա-
րեր ասերիչ, չարիք: Քսառ տարեկան Ռուբենը գիճա-
թափ կ'ընէր վաստակաւոր եւ առասպելատիպ հայ ֆե-
տային, որովհետեւ կար հաւատք: Տարբեր սերունդ էր,
տարբեր մեծութիւններ էին, որոնք իրենց լուսապա-
կը չէին որսար ոչ իրենց դրամատան հաշիւներէն, ո՛չ
վարչական պաշտօններէն, ոչ ալ այս կամ այն տեղու-
ցիտութիւններէն: Սփիւռքեան ճահճացման պատճառով
ծլած եւ գարգացած են կեղծ արժեքներ, որոնք աստի-
ճանաբար, թիչ մը արագ, թիչ մը դանդաղ, ազգի հատ-
ւած համարուող աշխարհասփիւռ համայնքները պի-
տի ամլացնեն, գանձեր պիտի վերածեն կրօնական կամ
մագնունով հայերու համայնքներուն: Եր *մարդակերտ*-
ներ չկան, պատմութեան, հայու հոգին արտայայտող
գրականութեան անտեղեկներ, հաշուապահներ, ինք-
նակոչ նոր *ամիր*ներ ազգը եւ ազգային գործերը
լուզեն վարել, ինչպէս կը վարեն նպարավաճառա-
տունը: Երբ չկան *մարդակերտ*ներ, հրապարակ կ'ամ-
լանայ, բայց կը պահուին հանգամանքները, գորս
կրողները ոխի յուզման ալիք կը բարձրացնեն, երբ
այս կամ այն պաշտօնական գիճեմօնին կամ ճաշկե-
րոյթին չեն հրակիրուիր: Կը բաւէ դիտել, ականջ տալ,
լսելու եւ համոզուելու համար:

Ո՞վ կը կարգայ այսօր, թէ ժընճել լոյս տեսնող Հ.
Յ. Դ. պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի շուրջ ի՞նչպէս
Քրիստափոր կը համախմբէր այդ օրերու հայ տաղան-
դի աւագ ներկայացուցիչներէն շատեր: Կը յաջողէր
համախմբել, որովհետեւ իբրեւ իսկական ղեկավար
գիտէր, թէ արժեքները գերիվեր են ամէն կարգի նկա-
տումներէ: Այսօր ո՞վ կը գուրգուրայ հայ արժեքնե-
րու վրայ: Եւ ի՞նչպէս կ'ուզէր, որ գուրգուրացողներ
գտնուին, երբ *մարդակերտ* ղեկավարները փոխարին-
ւած են վարչականներով, քառասներորդ, որոնք,
ինչպէս օր մը տպագրական սխալի կամ լափսլիսի
պատճառով գրուած էր, *մարդակերտ* ըլլալու փոխ-
րէն՝ *մարդակերտ* են: Քանի որ արժեքները ստորադա-
ւած են քաղաքի ալ նկատումներու, եւ այդ սխալ-
ներու համար ազգը պիտի վճարէ, եթէ չվերականգնէ
ինքզինք, հրապարակ չգայ իբրեւ իր արժեքներուն
տէր եւ հրապարակէն ջշէ կեղծ ու կեղծիքը, անըն-
վանողակն ու անարժեքը: Թեւեւ, արդար ըլլալու հա-
մար, ժողովուրդի մէջ այդ գիտակցութիւնը կը մշակ-
ւի եւ կը գարգանայ, եթէ մտաւորականութիւնը
յանդգնի դիմակները վար առնել: Նոյնիսկ եթէ սուղ
պիտի վճարէ: Կը յիշէ թ, թէ ինչ պայմաններու մէջ
մեռաւ Յակոբ Պարոնեան. բայց ինք մ'նայ կենդանի
եւ կը շարունակէ մեզ լիացնել, միւսները կուշտ էին
եւ ունէին պատմադրան, դարձած մոխիր: Օր մը պի-
տի գտնուին մարդիկ, որոնք պիտի ըսեն, թէ մշակույ-
թէն հետո, հայերէնի բարբառային մակարակի վրայ
գտնուողներ, պատմութեան միայն կարգախօսներ
տորվածներ եւ կրկնողներ, ի՞նչ գործ ունին, երբ
դպրոցներու բովանդակութեան մասին կը խօսուի,
երբ հայ թերթի կամ այլ լրատուամիջոցի բովանդա-
կութեան մասին կը խօսուի, երբ հայ ազգային քաղա-
քականութիւնը կը մշակուի: Նոյնիսկ յարգելի անձ մը,
իր բնական երկրին մէջ հեղինակութիւն ձեռք բերած,
երբ չէ դրոշմուած իր ժողովուրդի լինելութեան հար-
ցերով, մշակոյթով, գրականութեամբ, լեզուով եւ
անով փոխանցուող արժեքներով, ի՞նչպէս կրնայ յա-
ւակնել հայկական հաստատութիւններու եւ ընդհան-
րապէս ազգի ճակատագիր որոշելու յաւակնութիւն
ունենալ: Ներկայիս այս սխալը, սխալանքը, համատա-
րած բնոյթ ունին եւ կը տեսնու անմէջ դարձած իշ-
խանութիւններու լծակներու պահպանումով: Եկակն
այս հարցը չի բնուում: Ո՞վ պիտի բնուէ: Մանաւանդ
ո՞վ պիտի թոյլատրէ, որ այդ հարցերը բնուին:
Ճշգրտեք, որ այս երեւոյթը մասնակի չէ, բայց աշխար-
հագրական կարգ մը շրջաններու մէջ վարակիլ կէ
տարածուած է, իսկական աղետ, երբ մարդիկ ոչ թէ
մարդակերտ չեն, այլ գուրկ են նուազագոյն իմաս-
տութեան, գոր հին դարերէն ստացած ենք իբրեւ ժա-
ռանգութիւն, ըստ որում՝ այն գիտեմ, որ որ ոչինչ գի-
տեմ: Փրանսացի գիտնական ժան Ռոսթըմ գիտէր
այս, երբ կը գրէր, թէ նշարտութիւնը կը բարձրա-
նայ իր սխալներու պատմաւնդանին վրայ: Փակու-
ղիեն դուրս պիտի գանք այն օրը, երբ ժան Ռոսթըմ-
ներ հրապարակ գան եւ խօսին, ինչպէս խօսեցաւ
հուշակաւոր «*Կ'ամբաստանեմ*»-ի հեղինակը:

Գանճաններով ազգ չ'անիր:
Հետեւ մեզմէ այն միտքը, որ ասերելու միտումով
բննադատութիւն կ'ընենք: Ընդհակառակն, բննադա-
տութեամբ, ցնցումով, արժեքներու եւ իրաւութեան
վերականգնումով հարկ է դիմադրել ասերիչ ուժերը:
Այս պարագային է միայն, որ փոխանակ կորուսելու
մեր ազգային նկարագիրը գորշացնող միջավայրին
մէջ, մենք մեզ կը վերականգնենք, եւ այս կրկնել
միշտ լաւ է, իբրեւ ազգի հատուած, ոչ իբրեւ հա-
մայնք, կամ ասերի վատ՝ իբրեւ ֆրանսահայ, իբրեւ
նահայ, բրբառայ կամ բանաստեղծի ըսածին պէս՝ օր
մը ալ աստիպահայ:
Բայց յուսահատեցնող այն է, որ մեզ ճահճացնող
ուժերը պիտի չտեսնեն եւ պիտի չկարգան այս տողե-
րը, եթէ կարողան անգամ, երբեք պիտի չխորհին, որ
իրենց կը վերաբերին անոնք փրուած ըլլալով ի վե-
րուստ կամ աշխարհագրութեամբ տրուած իրաւունք-
ներով:
Ե՞րբ պիտի ըսենք Վիքոր Ղիւկոյի պէս, որ «*կար-
միր գլխարկ զրինք բառարանին*», «*յ'ai mis un bonnet
rouge au vicux dictionnaire*», որպէսզի վարչականը
ինքզինք չհամարէ ղեկավար, բանի որ իրաւ ղեկավա-
րը *մարդակերտ* է, *մարդակերտ* է:

3. ՊԱԼԵԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳԱՐՁԸ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱՉԳԱՅՆԱԿԱՆԻ ՈԼՈՐՏ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՀՈՐԻՉՈՆԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ընկերվարական Միջազ-
գայնականի ոլորտ վերադարձը իբրեւ լիիրաւ անդամ՝ կազմակեր-
պութեան 22րդ համաժողովին, որ տեղի ունեցաւ անցեալ 26 Հոկտեմ-
բերին Պրագիի Սան Փառլո քաղաքին մէջ, կը զուգարդիպի համաշ-
խարհային մասշտապով ընկերային պայքարի վերաշխուժացման: Մա-
յնմի մէջ 17 - 20 նոյեմբերին տեղի ունեցած Ամերիկաներու ազատ
առեւտուրի շրջանի բանակցութիւններուն առիթով կազմակերպուած
բողոքի ցուցերը վերջին արտայայտութիւնն են համընդհանուր գօ-
րաշարքի, որ սկսաւ Սիեթլի մէջ, 1999ին, եւ իր կազմակերպական
կառուցը ստեղծեց Փորթօ Ալեկրէի մէջ (Պրագի) 2002ին:

Ի տարբերութիւն անցեալին, ընկերային արդարութեան ի խնդիր
մարդկութեան չափ հին պայքարի նորագոյն յառաջապահները քա-
ղաքական կուսակցութիւնները չեն: Այլ՝ Համաշխարհային Հասարակ-
ական Ֆորումի մէջ Համախմբուած ընկերային շարժումները՝ իրենց
բազմակողմանի ծրագիրով, գորաշարքի իւրաքայտուկ կազմավարու-
թեամբ եւ իշխանութեան համար պայքարի տրամաբանութեամբ մը,
որ անյարիր է պետական մտածողութեան եւ աշխատելուին: Փաս-
տօրէն, ձեւաւորուելու սկսած է յառաջդիմական մտածողութեան ու
պայքարի նոր հորիզոն մը, ուր ընկերային արդարութեան հասկացո-
ղութիւնը կը վերալիցքաւորուի ազատ շուկայի տրամաբանութեան
անտեսած ու արհամարհած բոլոր հարցերու լուծումի պահանջով՝ ան-
ցործութիւն, ընկերային անհաւասարութիւն, մարդկային իրաւունք-
ներ, ցեղային ու կենցաղային խտրականութիւն, միջավայրի աւերումը
եւ այլն:

1980ական թուականներու սկզբնաւորութեան, ընկերվար-ժողովըր-
դավարական կուսակցութիւնները իշխանութեան գլուխ էին Եւրո-
պայի գրեթէ բոլոր կարեւոր երկիրներուն մէջ: Ընկերվար-Միջազ-
գայնականի բեմերէն կը հնչէին Ֆրանսուա Միթերանի, Օլաֆ Փալ-
մէի, Ֆելիքս Կոնսալէսի եւ Մարիօ Սուրբէսի նման պետական ղե-
կավարներուն տիրական ձայնը: Մարդկութեան յառաջդիմական
հատուածին համար, ոչ համայնավար այս ձախը Ռեկընի ու Թալըրի
յայտարարած այսպէս կոչուած «պահպանողական յեղափոխութեան»
այլընտրանքին մեծագոյն յոյան էր: Սպասուէր, սակայն, ինքզինք
չարդարացուէ: Եւրոպական ընկերվարութիւնը տեղատուութեան,
եթէ ոչ յստակ նահանջի մէջ մտաւ, մասնաւորաբար 1991էն ետք, երբ
Նորհրդային Միութեան փլուզումով արագացաւ նոր ազատական
զաղափարախօսական յստակ կնիքը կրող համաշխարհայնացման հո-
լովոյթը:

Ամբողջ 1990ականներուն, եւրոպական ընկերվարական մտածո-
ղութիւնը անկարող եղաւ ամբողջական աշխարհի կայացման այլընտ-
րանք մը առաջարկել, բացի Թոնի Պլէրի Եւրոբոլ Ուղին, որ ինքնին
ընկերվարութեան կերպարանափոխման ապագայ էր: Պետական քա-
ղաքականութեան սահմանափակումներով կաշկանդուած ընկերվար-
ժողովըրդավարական կուսակցութիւնները չկրցան ձեւ ու բովանդա-
կութիւն տալ նոր ազատական համաշխարհայնացումէն տոժող
եւ բազմազան իմաստով շահագործողներուն պահանջներուն ու պայ-
քարին: Եւ, ինչպէս Ֆրանսայի 2002 Ապրիլի նախագահական ընտրու-
թիւնները յատկանշակօրէն ցոյց տուին, ձախի այս տեղատուու-
թիւնը ծրարայն չի կարողանալ ջուր լեցուց եւ ամրապնդեց Շիրաքի
ներու, Ազնոյներու եւ Պերլուսկոնտիներուն իշխանութիւնը:

Կայնուած պետական մակարդակով միայն գործելու տրամաբա-
նութեամբ, Եւրոպայի Ընկերվարական կուսակցութիւնները ուշ անդ-
րադարձան, որ նորազատական համաշխարհայնացման հակադրուող
պատմական նոր պահ մը կազմավորուելու սկսած էր 1994էն ի վեր:
Մեքսիքայի (1994), Ասիայի (1997), Ռուսիոյ (1998), Պրագիի (1999),
Թուրքիոյ (2000) եւ Արժանթինի (2001) տնտեսական տագնապները
յստակ նշաններ են համաշխարհային տնտեսական համակարգի ներ-
հակ ցնցումներուն, որոնք հասարակական անդրադարձ կրնայ ահա-
ւոր ըլլալ: Ազատ շուկայի սանձաթմակ տարածման այս վտանգին դէմ
է, որ հասարակական նոր գորաշարք մը սկսած է: Անոր առաջին նշա-
նը տուաւ Մեքսիքայի Չիպախա նահանգի մէջ Չափաթակներու
չարժումը 1994ին: Բայց անկենդանադարձային պահը 1999ին Սիեթլը քա-
ղաքին մէջ կազմակերպուած բողոքն էր, որ վերանցաւ քաղաքական
ուժի եւ 2002ին ծնունդ տուաւ Համաշխարհային Հասարակական Ֆո-
րումին:

Նոր ազատական համաշխարհայնացման դէմ հասարակական այս
ընդդիմութեան մղիչ ուժը քաղաքական կուսակցութիւնները չեն, այլ՝
ընկերային շարժումները: Ընկերային շարժումներուն հոլովութիւնը
իրենց բազմազանութիւնն է: Անա թէ՛ ինչո՞ւ նոր ազատականութեան
դէմ հասարակական գորաշարքին միացած են իրարմէ՛ յանքան տար-
բեր ծրարային նպատակներ հետապնդող արհեստակցական միու-
թիւններ, կենսոլորտի պաշտպաններ, գիւղական համայնքներ, մարդ-
կային իրաւանց պաշտպաններ, իրաւագործ ժողովուրդներու դատը
հետապնդողները եւ այլն: Եւ մինչ կը կարծուէր, որ այսքան բազմա-
զան գորաշարք մը ի սկզբանէ՝ ձախողութեան դատապարտուած է,
կամ, դիտուածաբար, Սիեթլը, ձենովայի եւ Քեպլէր Միթիի մէջ բո-
ղոքողներուն կը փակցուէր «հակալիւսապալիստ» պիտակը, Փորթօ
Ալեկրէի մէջ Համաշխարհային Հասարակական Ֆորումը իրեն շատ
յստակ նպատակ դրաւ այլընտրանքային համաշխարհայնացումը եւ
իրբեւ նշանաբան որդեգրեց «Այլ աշխարհ մը կարելի է»: Այսինքն՝
մինչ նոր ազատականութիւնը համաշխարհայնացումը հաւասարած է
շուկայական սանձաթմակ տարածումին հետ եւ ժողովրդավարու-
թիւնը ներհակ պայման նկատած այս գործընթացին, Համաշխարհա-
յին Հասարակական Ֆորումը կու գայ մերկացնելու նոր ժամանակ-
ներու շահագործման իրականութիւնը եւ վերասահմանելու ընկերա-
յին արդարութեան ի խնդիր պայքարը: Համաշխարհային Հասարա-
կական Ֆորումը, հետեւաբար, ընկերվար յառաջդիմական մտածողու-
թեան ամենէն հարազատ արդիականացումն է:

Եւրոպական ընկերվար-ժողովրդավարութիւնը
չկրցաւ ժամանակին հասկնալ ընկերային շարժումնե-
րու կարեւորութիւնը համաշխարհայնացման գործըն-
թացի ոլորտին մէջ արդար աշխարհակարգ մը սահմա-
նելու կոչուած դարաւոր պայքարին համար: Այդ
պատճառով իսկ, Եւրոպայի Ընկերվարական կուսակ-
ցութիւնները չկրցան ղեկավարել հասարակական այս
չարժումը, որ կարելի չէ կաշկանդել միայն ընտրական
գործընթացով: Նոր է միայն, որ, Ֆրանսայի ընկեր-
վարականներու նախաձեռնութեամբ, Համաշխարհա-
յին Հասարակական Ֆորումին նպատակները ծրարա-
յին կէտերու վերածելու քաջալերական հոլովոյթ մը
կը ձեւաւորուի: 12 - 15 նոյեմբերին Փարիզի մէջ տեղի
ունեցած Եւրոպայի Հասարակական Ֆորումի հաւա-
քին առիթով, Ֆրանսայի Ընկերվարական կուսակցու-
թեան առաջին քարտուղար Ֆրանսուա Հոլանտ եւ
Դանիոյ նախկին վարչապետ ու Համաշխարհային Յա-
ռաջդիմական Ֆորումի նախագահ Փոլ Նալոնի
Ռասմուսէն «Լը Մոնտ»-ի 12 նոյեմբերի համարին մէջ
միասնաբար հրատարակած են «Համաշխարհայնաց-
ում. բանավէճէն քաղաքական աշխատանք» յօդու-
քը, ուր բառացիորէն կ'ըսեն. «Կը վկայենք, որ մեր քա-
ղաքական ընտանիքին մէջ Փորթօ Ալեկրէի մէջ ձեռն-
վայի անդրադարձը շատերու համար զգաստութեան
հրաւէր եղաւ: Պէտք է անկեղծ ըլլանք ընդունելու հա-

մար, որ շատ ուշացանք: Բայց այդ պահը մեր ետին մնացած է արդէն:
Իսկական համաշխարհային ձախի մը ժամանակը մեր առջեւ է»:

Մանօթ է, որ 1980ական թուականներէն ի վեր Հ. Յ. Դաշնակցու-
թիւնը մօտիկ յարաբերութիւն հաստատած է եւրոպական ընկերվար-
ժողովրդավարական կուսակցութիւններուն հետ: Գաղափարախօսա-
կան ինքնութեան կողքին, Հ. Յ. Դաշնակցութեան հետեւողական յա-
րաբերական աշխատանքը ուղղակի արական իր իմաստը ունէր: Փաս-
տօրէն, Հայ Դատի միջազգային արժարժման հոլովոյթին մէջ, Եւրո-
պական խորհրդարանի 10 Յունիս 1987ի որոշումը քաղաքական իմաս-
տով առաջին յատկանշական նուաճումն էր, որուն համար առանց-
քային եղաւ ընկերվարական պատգամաւորներուն նեցուկը: Ժողովրդ-
ավարութեան յանձնառութիւնը, որուն փաստը Դաշնակցութիւնը
տուաւ 1990ին Հայաստան վերադարձին ետք հակառակ կուսակցու-
թեան դէմ ծառայած հալածանքներ, եւրոպական ընկերվար-ժողովրդա-
վարական մտածողութեան մէկ այլ դրական անդրադարձն է:

Ինչ որ Հ. Յ. Դաշնակցութիւնը այնքան ալ չկրցաւ իւրացնել եւրո-
պական ընկերվար-ժողովրդավարներէ իրենց ընկերային ծրագիրն էր:
Պատճառն ալ պարզ է. սփիւռքեան կեանքին մէջ ազգային պետակա-
նութենէ գուրկ պայմաններով գործելով, Հ. Յ. Դաշնակցութեան ըն-
կերային պայքարի ծրագիրը գործնական հողի վրայ փորձարկութեան
առիթը չունէր: Իսկ երբ այդ առիթը ստեղծուեցաւ 1990էն սկսեալ,
Դաշնակցութիւնը դէմ յանդիման գտնուեցաւ նոր իրականութիւննե-
րու: Ազգային ծիրին մէջ, գոնէ մինչեւ 1994, արցախեան ազատամար-
տը եւ Հայաստանի անկախացումը, բնականաբար, օրակարգի առա-
ջին կէտի վերաժուեցան: Արդիւնքով՝ ազգային հարցը չուրէ մէջ ձգե-
նէ ոչ մտնացման մատնեց, ընկերային հարցը:

Կար նաեւ համայնավար վարչակարգի լուծը թօթափող եւ ընկեր-
վարութիւնը միայն եօթնասունամեայ խորհրդային փորձառութեան
պրիմալէն ճանցող հայրենի հասարակութեան Հ. Յ. Դաշնակցու-
թեան դաւանանքը բացատրելու խնդիրը, որ դրուեցաւ մինչեւ իսկ ան-
կեղծօրէն Հ. Յ. Դաշնակցութեան հայրենիք վերադարձը սպասողնե-
րուն պարագային: Լեւոն Տէր Պետրոսեան, իր կարգին, առիթ չէր
փախցնել խարազանելու Դաշնակցութեան «սոցիալիզմը», մանա-
ւանդ երբ Դաշնակցութեան պատգամաւորները յաղոյ կերպով կ'ընդ-
դիմանային Հայաստանի տնտեսութեան անվերահսկելի ազատակա-
նացման ու սեփականաշնորհականացման միջոցով երկրի հարստու-
թիւնը իշխանակարգի մօտիկներուն ձեռքերուն մէջ կեդրոնացման
ծրագիրներուն:

Հ. Յ. Դաշնակցութեան Ընկերվար Միջազգայնականի լիիրաւ ան-
դամակցութիւնը նոր խթան է Հայաստանի մէջ ընկերային հարցի վե-
րածարձման: 1990ական թուականներուն ազգային եւ ընկերային
հարցերու անջատման սխալ եղաւ: Ընկերային արդարութեան տեսան-
կիւնէ Հայաստանի իրավիճակը յար եւ նման է նոր ազատական տնտե-
սակարգը կուրորէն հաստատած որեւէ ծայրամասային երկրի իրավի-
ճակին: Ոչ միայն աղքատութեան եւ անդրօրութեան բարձր տոկոս-
ները համեմատելի են, ոչ միայն հարստութեան կեդրոնացման իրա-
վիճակը նոյնն է, այլ առողջապահական համակարգի, ընդհանրապէս
կան հիմնախնդիրներու եւ յանախ տնտեսուած հասարակական այլ
անարդարութիւններու (ինչպէս օրինակ համար անտուններ) հար-
ցերը նոյնն են:

Պետական մակարդակով ընկերային ապահովութեան նախաձեռնու-
թիւններու պատասխանատուութիւնը սասանձնելը, անշուշտ, բարոյա-
կան բարձրութեան ու յանձնառութեան ցուցանիշ է: Բայց բնաւարար
չէ: Նախ որովհետեւ պետութիւնը ինքնին այնքան մը կայացած չէ, որ
կարելի ըլլայ ըսել, թէ Հայաստանի հարստութեան տէր դարձած նոր
դրամատէրներու ազդեցութեանն ընդդէմ անկախ է կամ կրնայ
անոնց հակադրուի: Ընդհակառակը, ընկերային մասշտապով Լեւոն
Տէր Պետրոսեանին Ռուսիոյ ֆոնտանային ու իրաւունքներու ձեռք բեր-
մանը համեմատելի են, այս, ներքուստ եւ արեւելի մտահոլութիւն կը ներշնչէ,
բայց այդ ներքուստներէն միեւնոյն դասակարգն է, որ կ'օգտուի:
Հարստութեան արեւելի արդար բաշխման մեքանիզմ չկայ: Եւ դժուար
է որ ստեղծուի երկրի մը մէջ, որուն Ազգային ժողովրդի պատգամա-
ւորներուն կէսէն արեւելի իրենց դրամի ուժով ընտրուած ձեռնարկա-
տէրեր են, որոնք դժուար թէ իրենց շահերուն սպառնացող որեւէ պե-
տական ծրագրի համաձայն ըլլան:

Նման տնտեսական համակարգի մէջ ընկերվարական գործը սահ-
մանափակել միայն ընտրութիւններու ճամբով իշխանութեան հաս-
նելու հեռանկարով լուսագոյն պարագային ժամանակի կորուստ է: Յո-
ռեզոյն պարագային Հ. Յ. Դաշնակցութիւնը մեղաւոր կը դարձնէ
անարդար կարգերու, որոնք նոյնիսկ զաղափարախօսական տուրք
տալու հարկադրանքին կողմ կրնայ գտնուի: Այս իսկ պատճառով, պե-
տական մակարդակով ընկերային հարցերու պատասխանատուութիւն
պտանձնելու կողքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը Հայաստանի մէջ ընկեր-
վարական գործը յառաջ պէտք է տանի հասարակական գորաշարքի
ճամբով:

Դաշնակցութիւնը, հետեւաբար, իր ընկերվարական պայքարի դաշ-
տը վերանայելու, վերասահմանելու եւ վերաշխուժացնելու խնդիր ու-
նի: Այս իմաստով, 2002 Յունիսին

Աշակուբայրն էջ

ԴԻՄԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՒ ՀՐԱՉԵԱՅ ՌՈՒԽԿԵԱՆ



«Խաչատուր Աբովեան». գործ՝ Երազեայ Ռուսկեանի

Կատարողական ձեռքի առումով եւս դիմանկարչու թիւերը ունի իր տարատեսակները: Ամէնէն տարածուած եւ ամէնէն ընդունուած կերպը այն է, որ երբ գեղանկարիչը իր ներշնչումը կը ստանայ ուղղակի բնորոշ: Առաւել վարպետները կը նախընտրեն, որ բնորոշ շարժի, որպէսզի դիմանկարը աւելի շնչաւորուի եւ կենսունակ դառնայ: Երբ պատկերուող անձնաւորութիւնը մահացած է, արուեստագէտը կ'օգտուի անոր յուսանկարներէն:

Հեր միայն կրնան յաջողիլ եւ գեղարուեստական գետնի վրայ փամանակի մաշումին դիմացող դիմանկարներ իրագործել: Այս ձեւով պատկերած է Ժ. Դարու Թիֆլիսի ազնուական տիկիններէն մէկը «Մուշակներ», իրաւորութեամբ՝ Յակոբ Յովնաթանեանի կողմէ: Յիշողութեամբ դիմանկարներ կերտելու արուեստին մէջ չափազանցօրէն օտտուած էր նաեւ Փոլ կիրակոսեան: Յայտնի են անոր Միխայիլ Նայիմի, ժատակներ եւ կամ Պետրի Հերկելեանի

նաւորութիւնը, որուն դիմանկարը պէտք է որ կերտէ: Հոս երբեմն օգնութեան կը հասնին անոնք, որոնք կը ճանչնային ենթակայան եւ կը նկարագրեն անոր դիմագիծերը: Յաջողութեան յոյսը բաւականին թոյլ է այս պարագային:

Սակայն հարցը բոլորովին կը փոխուի, երբ խնդիրը կը վերաբերի պատմական անձնաւորութեան մը, մշակութային գործիչի եւ առհասարակ յայտնի դէմքի մը դիմանկարի ստեղծման: Հոս գեղանկարիչը աւելի գործունի պատկերուողի նկարագիրին եւ անհատականութեան հետ, քան՝ նմանութեան, որովհետեւ ոեւէ մէկը չէ տեսած ու չի կրնար յիշել զայն: Այնուամենայնիւ կան լայն ժողովուրդի երեւակայութեան մէջ: Այս պարագային երկրագործը պէտք է որ ուսումնասիրէ ու լաւագոյն ըմբռնէ պատկերուող կերպարի խառնուածքն ու նկարագրային գիծերը, որպէսզի կարենայ կերտել այնպիսի տիպար մը, որուն մէջ խտացուած ըլլայ տուեալ անձնաւորութեան ներքին «դիմագիծերը»:



«Աբու Լալա Մահարի», գործ՝ Երազեայ Ռուսկեանի

Իսկ երբ կը բացակային նաեւ լուսանկարները, հարցը կը բարդանայ: Եթէ պատկերուող անձնաւորութիւնը ծանօթ էր արուեստագէտին, մասնաւորապէս երբ ան որոշ մօտիկութիւն ունէր անոր հետ, արուեստագէտը կը դիմէ իր յիշողութեան: Դիմանկար պատկերելու այս տարբերակին մէջ շատ քի-

զիմանկարները, որոնք պատկերուած են յետ մահու եւ յիշողութեամբ: Ի դէպ, Փօլ կիրակոսեան կը մերժէր լուսանկարներէ օգտուիլ: Իսկ բնորոշ պարագային անպայման կը խօսէր անոր հետ եւ շարժման մէջ կը դնէր զայն: Իսկ իր կը դժուարանայ հարցը, երբ արուեստագէտը չի ճանչնար այն անձ-

ՀՐԱՉԵԱՅ ՌՈՒԽԿԵԱՆ

Հանրապետութեան վաստակաւոր նկարիչ Հրաչեայ Ռուսկեան ծնուել է 1915 թուականին, Ալեքսանդրապոլում (այժմ Գիւմրի), ծառայողի ընտանիքում:

Ուսումնառութեան, ինչպէս նաեւ մասնագիտական կրթութեան առաջին քայլերը կատարուել են ծննդավայրում, ապա շարունակուել Երեւանում: Բարձրագոյն մասնագիտական կրթութիւնը նա ստացել է Թիֆլիսի գեղարուեստի բարձրագոյն հիմնարկում, որտեղ էլ նա ձեւաւորուել է որպէս գծանկարիչ: Մի առանձին սիրով ու երախտագիտութեամբ է յիշում նա իր ուսուցիչներ Ս. Առաքելեանին, Վ. Գալֆէճեանին, Գ. Գիւրճեանին, Շառլեմանին:

Երիտասարդական տարիներին նկարիչը ստեղծել է մեծ քանակութեամբ որմագրներ, յորեկեանական գործմանիչներ, դիմանկարով բացիկներ եւ այլ գործեր: Սակայն այս ամէնը վաղանցիկ էին եւ ոչ բնորոշ նրա նախասիրութիւններին: Ռուսկեանի հասուն տարիների ստեղծագործութեան կրկնազարդ դարձաւ դիմանկարն ու համադրութիւնը:

Սայաթ Նովայի հանդէպ ունեցած յափշտակութիւնը երկար տարիներ հանգիստ չի տուել երիտասարդ նկարչին: Սիրոյ մեծ երգիչը դարձել է նրա երազանքը, նրա ստեղծագործական մտայնացման անկրկնաբարեից մէկը: Եւ իրօք, երբ 1945 թուականին յայտարարուեց Սայաթ Նովայի դիմանկարի մրցանակաբաշխութիւնը, Հրաչեայ Ռուսկեանի կաւաններով է առնուիտով արուած դիմանկարը շահուեց և առաջին եւ միակ մրցանակը: Այդ փամանակից սկսած համայն աշխարհի հայութիւնը եւ այլազգիներ հնարաւորութիւն են ունենում «անձամբ ճանաչելու» մեծ երգչին ու բանաստեղծին:

Սայաթ Նովայի ծննդեան 250ամեակի յորեկեանին Հ. Ռուսկեանը ներկայացնում է դիմանկարի տարբերակը՝ փասթէլով: Մեծ երգչի ստեղծագործական կենսը, ինչպէս յայտնի է, անցել է Թիֆլիսում, ուստի եւ նկարի մէջ արտայայտուած բնաշխարհը՝ հեռուում ուրուագծուած Սեփեթի վանքը, այդ է պահարկում: Սայաթ Նովայի արտաքինի մասին որեւէ յիշատակութիւն չկայ, սակայն նրա անմահ երգերը այլ բան չեն ասում մեզ, քան այն, որ մեծ աշուղը համակրելի մարդ պիտի եղած լինի: Ռուսկեանի ստեղծած դիմանկարները ստացած տպաւորութիւնը իրողութեան ուժով հաստատում է Սայաթ Նովայի անձնաւորումը: Յօրինուած կերտում է կապուտի եւ վարդագոյնի կանաչախառն երանգաւորման համադրումը ու թեթեւակի ընդդժմմեքով, որն իր ամբողջութեամբ գարնանային շունչ է բուրուում, քնարականութիւն հաղորդում աշխատանքին: Պատահանից ներս թափանցած արեւի շողերով լուսաւորուած են դէմքն ու ձեռքերը, որոնք գոյնների թեթեւակի խաղի ու երանգաւորման զսպուածութեամբ արտայայտում են հոգեկան հարուստ ներաշխարհ ու որոշակի կենսահայեցողութիւն:



«Շայրենի ծով», գործ՝ Երազեայ Ռուսկեանի

Այդ նոյն յորեկեանական օրերին նկարիչը արուեստասէրների դատին ներկայացաւ մի մեծածաւալ համադրական նկարով՝ այս անգամ օգտագործելով ջրանկարը: Ծաղկած ծառերի խորապատկերի վրայ Սայաթ Նովայի գոգայներն են ու այդ երկրներանդ համաստեղութեան մէջ նրա սիրոյ տենչանքը, աւանդութեամբ յիշատակուած արքայաքոյր Աննան: Նկարում չկայ սիրոյ մեծ երգիչը, սակայն նրա ներկայութիւնը խորհրդանշուած է երեք լեզուներով՝ յօրինուած խաղերով, երեք ծորակներից ցայտող աղբիւրի առկայութեամբ:

Տարիներով մի մեծ ու երջանակաւ իր իր է փայտաշին նկարիչը՝ ստեղծագործել հայ մշակութի երախտաւորներին դիմանկարները, ապրեցնել նրանց մեր մէջ՝ իրենց մարմնական - արտայայտչական էութեամբ եւս:

Նա շարունակ խորհել է, ուսումնասիրել, դիմել պատմիչներին: Եւ եղել են պահեր, երբ իր մտայնացումներին կերպարանք է տուել: Այդպիսի պահերի արդիւնք են Մեծնոպ Մաշտոցի ու Վեամշապուհ արքայի դիմանկարները:

Բնական մեծութեամբ է կերպարուած Մեծնոպ Մաշտոցը՝ երկու ձեռքերի մէջ պահած մագաղաթեայ դիրքը: Նրա կեցողութեամբ աւանական է, ինքնապատահաբար մեծագործութեան գիտակցութեամբ ամբարայնուած: Առանձնապէս ակնառու է գունային եւ լուսային համադրութեանը նկարչի գործն միջամտութիւնը, որը եւ նպաստել է մտայնացման մարմնաւորմանը: Խառն շրջապատի մէջ թանձր գոյներով կանաչի ու կարմրի ներդաշնակ գուգոյրմամբ է ընդգծուած



«Սայաթ Նովա». գործ՝ Երազեայ Ռուսկեանի

պահի կարեւորութիւնը: Երջապատի թանձր խառնուում, որը խորհրդանշում է փամանակաշրջանը, լուսաւորուած է միայն մեծագործի ճակատը եւ այնուհետեւ փոքր-ինչ մեղմութեամբ, երեւելներով լոյսը իջնում է մինչեւ մագաղաթեայ գիրքը բռնած ձեռքերը:

Մեծնոպ Մաշտոցը միայնակ չէր. նրան հովանաւորող, ուժ ու կորով ներշնչող, գրի անհրաժեշտութիւնը քաջապէս գիտակցող մարդ էր անհրաժեշտ, եւ այդպիսին կար: Դա վաղաժամ արքան էր: Մեծնոպեան գրի գիտին յաջորդած պահն է ապրում հայոց արքան: Նա կերպարուած է գրի ուժով արդէն լուսաւորուած հայոց աշխարհի խորապատկերի վրայ: Երջապատը ողորդած է պայծառ գոյներով, իսկ արքան հպարտ կեցողութեամբ ու սեւեռուն հայեացքով, հաստատակամ ու լրջախոհ նայում է հայոց աշխարհին: Այլ ձեռքում պահած գիրքը դրել է արքայական սրի վրայ: Գիրքը լուսաւորութիւն է, իմաստութիւն, գիտութիւն եւ ըստ Ռուսկեանի մեկնաբանութեան, որ

միանգամայն ճիշդ է ու պատմականօրէն արդարացուած, շատ աւելի գորեղ գէնք է ազգապահպանման համար, քան ինքը՝ գէնքը:

Հրաչեայ Ռուսկեանին հաւասարապէս հետաքրքրում են իր ժողովրդի անցեալն ու ներկայն, նրա երկին ու այսօրը: Նա ամէնուր է, ուր վերելք ու կառուցում կայ, ուր վերափոխում է կենսը, ուր վերափոխում է ստեղծագործ մարդը: Մի թէ՛՞ դրա լուսաւորչ արուեստագէտը հայտնաբերում է կենսաւորուած երկկտրական յանրերը, աշխատանքային տեսարանները եւ այդ ամէնը կերտողներին դիմանկարները:

Հայրենասիրութիւնն ու նրան առնչուող թեմաները նկարչի ստեղծագործութեան մշտահոս ու գուլալ ակունքներն են: Շատ են այդ կարգի նկարները, իսկ նրանց շարքում առանձնաւորում են «Շայրենի ծով» եւ «Ձօրավար Անդրանիկ» լինոփորագրութիւնները:

Եթէ «Շայրենի ծով»-ը եւ Շղեռն է՝ հայ ժողովրդի տխուր անցեալի ամենաարհեստալի էջը, եւ լաւեթ սպրեչու իրաւունքն ու կարողութիւնը խորհրդանշող պատկեր, ապա «Ձօրավար Անդրանիկ»-ը ժողովրդի հերոսութեան կերպարուումն է ու անձնաւորումը: Այս կերպարում նկարիչը հասել է տիպականացման՝ ներդաշնակելով գոյնը, կերպը, ձեւը եւ կառուցուածքը:

Այդ նոյն ճանապարհով է նա կերպարուել կոմիտասի «Նորուից» եւ «Գարուն ա» դիմանկարային գործերը, Թումանեանի, Իսահակեանի եւ հայ մշակութի անցեալի ու ներկայ գործիչների դիմանկարները:

Մի առանձնայատուկ կրթով ու նուիրուածութեամբ է նկարիչը վերաբարտադրել Հայաստանի պատմական յուշարձանները, որոնք զգալի տեղ ունեն նրա արուեստում:

Ստեղծագործական 30 տարիների ընթացքում վաստակաւոր նկարիչ Հրաչեայ Ռուսկեանը իր աշխատանքներով մասնակցել է հանրապետական, միութեանական եւ միջազգային ցուցահանդէսներին: Անհատական ցուցահանդէսներ է ունեցել Մոսկուայում, Թիֆլիսում, Երեւանում եւ Հայաստանի ու Վրաստանի բազմաթիւ շրջաններում:

ՄԻՔԱՅԷԼ ԶԱՒԱՐԵԱՆ

Հայ Աւեր. Կերթմենեան Կարծարան

ԿԱՂԱՏԻ ՊԱՉԱՐ

Տեղի կ'ունենայ 5 եւ 9 Դեկտեմբեր 2003ին, Կեսօրէ առաջ ժամը 10:00Էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00, Կարծարանի սրահին մէջ:

Հրատր

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԿՈՉ

Մեկնելով մեր 8 Նոյեմբեր 2002 թուականի կոչին, կու գանք վերոյիշեցնելու մեր սիրելի հաւատացեալներուն, որոնք տակաւին չեն վերանորոգած Պուրճ Ընտանիքի Կայ Կաթողիկէ գերեզմանատան մէջ իրենց դամբարաններուն սեփականագիրը, մինչեւ 20 Դեկտեմբեր 2003 ամբողջացնել զայն՝ ներկայանալով ժողովրդապետութեան գրասենեակը, ամեն օր, բացի Ուրբաթ եւ Ծաբաթ օրերէն, առաւօտեան ժամը 9:00էն 13:00, հարկատու կարգադրութիւնները տեսնելու համար:

Վերոյիշեալ թուականէն ետք, չվերանորոգուած սեփականագիր մը չեղեալ պիտի նկատուի:

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՊՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ ԷԸՐԵՑԻԷ

Ս. ՅԱԿՈԲԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Այս տարի, Ս. Յակոբ Սծբնայ հայրապետի անուանակոչութեան տօնը Ծաբաթ, 13 Դեկտեմբեր 2003ին է: Այս առիթով տեղի պիտի ունենան հոգեւոր եւ ազգային բնոյթով տօնախմբութիւններ: Դարձեալ պիտի պատրաստուի աւանդական «հերիսան»:

Մեր ժողովուրդի գաւակներէն անոնք, որոնք կը փափաքին այս առիթով մատաղցու ոչխար կամ փոխան ոչխարի նուիրատուութիւն կատարել, թող բարեհաճին կապ հաստատել թաղականութեան գրասենեակը՝ ամէն առաւօտ ժամը 8:30էն 12:30: Ընդ. 01-449926:

ԹԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԸՍՍԱԶՁԱՅԻՆ ՈՒՐԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ ՍԱՍՆԱՃԻՂԻ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Կը ձեռնարկէ Դասական երաժշտական գրոյց հանդիպումներու շարքի մը 3ատկանական գործերու ունկնդրութեամբ եւ տեսաերկներու ցուցադրութեամբ Ներկայացնող՝ Ընտանեկան «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի Դասախօս ՊՐՆ. ՄԵԼԸՆ ՏԵՍԻՐՃԵԱՆ Առաջին հանդիպումի միւթ Ընդհանուր Ներածութիւն Դասական երաժշտութեան Երկուշաբթի, 1 Դեկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 7:30ին, «Ազատամարտ» ակումբին մէջ (Էշրեֆիէ): ԵՄՆՕԹ.- Ընտանեկանները տեղի կ'ունենան երկշաբթեայ դրութեամբ: ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԽԱՉԲԱՒ ԹԻՒ 5602 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

11x11 grid with numbers 1-11 in columns and rows, used for a crossword puzzle.

ՇՈՒԻՆՆԱԿԱՆ

ՈՒՂԱՆԱՅԵԱՑ

- 1. Ճճի - Լեզուով մը՝ այր:
2. Հայաստանի գետերէն - Որսի միս:
3. Ճորճիա նահանգի գետերէն - Նորհրդածէ:
4. Գիրուց - Ժխտական մասնիկ - Ամերիկեան ոստան (Հակ.):
5. Նիւեո, անհնազանդ:
6. Յաւիլ, կսկծար:
7. Թրիթ - Անաստաս Ա. կաթողիկոսի ծննդավայրը:
8. Որձ - Իսրայէլի առաջին քահանայապետը:
9. Մոյթ - Հանդուրժելի կամ կերելի:
10. Սեփականութիւն - Այծի կոկորած կաշի - Ցուցական ածական:
11. Նրստուկ - Կանգուն երկանաբար:

- 1. Ռուսական Հրացան - Հայաստանի գետերէն:
2. Ճմարիտ - «... Ըսէ մտիկ ընդ չկայ» (ասացածք):
3. Շահ Աբասի բռնագողթի ենթարկած քաղաքներէն - Ճղատ:
4. Իգական օտար անուն - Ամթահար:
5. Կամաւորական արշաւավայր - Չայնանիշ:
6. Անջրդի տարածք - Նորշիւ:
7. Անառակ, փողոցային:
8. Անարգական:
9. Կերոն - Մանրատերեւ թմբի:
10. Կանացի պատուանուն - Արական օտար անուն:
11. Մաքրողական տերեւներով բոյս - Ոգելից ըմպելի:

ԹԻՒ 5601

ԽԱՉԲԱՒԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

11x11 grid with letters, used for a crossword puzzle.

ՃԱՏՐԱԿ



1

ՍԵՒԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ԸՆՐԺՈՒՄՈՎ



ԶԱՐԵՐԱ Կ. - ՆՈՐՄԱՆԸ Ռ.

2

ՍԵՒԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ԸՆՐԺՈՒՄՈՎ



ՈՍՏՈՍՅԱՍ Ա. - ՆԵԿՐԻ Ս.

3

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ԸՆՐԺՈՒՄՈՎ



ԵՐԻՒՆՁՕ Մ. - ԶԱՐԵՐԱ Կ.

4

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍԷ ԵՒ ՄԱԹ 2 ԸՆՐԺՈՒՄՈՎ



ՈՒՐԵՍԱ Ա. - ՊՈՓ Թ.

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սինակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

ՏԻՆՆԱԿԱՆ ԿՐԻՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)

Յոգնած կը գգաք, անտրամադիր: Սովորականէն աւելի շղագրգիտ էք: Զանցեք ըլլալ համբերատար: Օրը անցուցէք հանդարտութեամբ:

ՅՈՒՆ (21 Ապրիլին 21 Մայիս)

Սքանչելի է օրը ոգեւորելու եւ առաւել արդիւնաւորելու ձեր աշխատանքները: Եղբ Ժեր գործին տէրը, միշտ պատասխանատուութեան գիտակից:

ԵՐԿՈՒՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)

Յոյսեր ունէիք գործի մը կարգադրութեան մը համար, բայց ձեր յոյսերը ի դերեւ պիտի ելլեն: Կրկնապատկեցէք ձեր ջանքերը, որպէսզի իրականացնա՞յ ձեր հետապնդած ծրագիրը:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)

Աստղերը պիտի առաջնորդեն ձեզ այսօր, ուսանող ըլլաք թէ գործի մարդ: Պիտի ունենաք յաջողութիւններ ձեր ծրագրերէն Վերաբերելով:

ԱՌԻԻԾ (24 Յունիսին 23 Օգոստոս)

Մանր հարցեր ձեզ կը մտահոգեն, բայց դուք ձեր կամքով եւ իմաստուն կեցուածքով պիտի յղթահարէք դժուարութիւններուն: Ուրախ եղէք:

ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Ձեր ընկերոջ կամ ձեր ամուսինին հետ չէք գտնուիր միեւնոյն կարծիքին մէջ: Չունիք միեւնոյն կեցուածքը որոշ հարցերու շուրջ: Մէկը ունի իր երազը, միւսը՝ ժամանակ կ'ուզէ տալ մտածելու եւ որոշելու համար: Համաձայնեցէք:

ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Աշխատանքի մէջ ունանք ձեզ կը հետապնդեն ձեր յանցանքը գտնելու: Ասիկա պատճառ մըն է, որ բարձր մնաք ձեր դիրքին վրայ, առանց ուրեմէ մէկէն ազդուելու:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Աշխատանքի մէջ համակարգը մը ունիք ձեր շրջապատին մէջ, բայց երբեք կարելի չէ սերը խնայել գործին: Հետեւաբար եղէք վերապահ եւ իմաստուն:

ԱՂԵՂՆԱԻՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Ձեզի պիտի յիշեցնեն անցեալին պատահած տխուր եղելութիւններ, որոնք մասին բնաւ պիտի չուզէիք իմանալ: Օրը ապրեցէք այնպէս, ինչպէս որ է:

ԱՅՄԵՂՋԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)

Անակնկալի պիտի բերէք բոլորը (նոյնպէս դուք ձեզ), դուրս գալով, ձերբազատելով հարցէ մը, որ կը թուէր տաղտկալի ըլլալ: Լաւ է ձեր կեցուածքը:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)

Բնաւ չէիք սպասեր, որ ունենաք այսքան ծանր հաշուեցոյց մը: Պէտք է փոխաբեր, որ երազելու ժամանակ չէ, այլ՝ իրականութիւնը տեսնելու:

ՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)

Ամիսը պիտի սկսի խոստմնալից, որովհետեւ պիտի լսէք գնահատանքի խօսքեր, բայց ափսոս, որ երկար պիտի չտեսնեն անոնք: Համբերեցէք:

ՕՐԱՏԵՏՐ

ՏՕՆԱԿԱՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԿ

«ՍՈՒՔ ԷԼ ՊԱՐՂՈՒԹ» Ի ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹ

Տարիներ շարունակ իր հետեւողականութեամբ եւ այլապէս նաեւ հինի թէ նորի փնտռողներուն մէջ եղող այցելուներուն գոհացում տուող «Սուք էլ Պարղութ»ը կը նկատուի տարւան տարբեր ամիսներուն լիբանանեան զանազան շրջանները ողողող բազմաթիւ տօնախմբութեան կարեւորագոյնը:



«Պիէլ» ցուցարարահին ընդարձակ տաղաւարներուն մէջ տարածուած ժողովրդային այս շուկան այս օրերուն 21րդ անգամ ըլլալով կը բանայ իր դռները եւ շուրջ տասնեակ մը օրերու ընթացքին կ'ընդունի այցելուներ: «Սուք էլ Պարղութ» ի տաղաւարները իրենց ցուցադրութիւններով եւ լիբանանեան ժողովրդային խոհա- յոնքի բաժիններով կը գրաւեն մեծ թիւով այցելուներ եւ գնորդներ, որոնք առիթ կ'ունենան տեսնելու լիբանանեան ձեռարկուած եւ աւանդական արհեստներու գործեր, ինչպէս նաեւ ժամանակակից շուկային պահանջը գոհացրող զանազան արտադրութիւններ: Սարկայն պէտք է նշել, որ «Սուք էլ Պարղութ» կը յատկանշուի մասնաւորաբար հին եւ որոշ արժէք ներկայացնող զանազան առարկաներու ցուցադրութիւնով: Տօնախմբութեան ժամը 10:00:

ԱՅՍՕՐ

Երգահանդէս՝ Մենդեան Երգեր, ժամը 15:30ին, Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Ուեսթ Հոլ» շէնքին սրահին մէջ: Նուագահանդէս՝ Մարթին Սփանընպըրիի (բլաւրինէթ) եւ Սթեֆան Բէյքըրի (դաշնակ) ելոյթ, ժամը 20:30ին, Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Էսթմայլ Հոլ» սրահ: Երգական Շարժապատկերի փառատօն, ժամը 17:30էն սկսեալ, շարժապատկերի «Սոֆիլ» սրահ, մինչեւ 7 Դեկտեմբեր: Տօնախմբութեան «Սուք էլ Պարղութ», «Պիէլ», մինչեւ 7 Դեկտեմբեր: Լուսանկարչական ցուցահանդէս «Լա Ռըշերշ տը Լ'օմ օ սայլ», Անթիլիքա Շրեօտըրի գործերը, «Կեօթէ» հիմնարկ, մինչեւ 19 Դեկտեմբեր: Լուսանկարչական ցուցահանդէս «Հիսթորա տորմիթ տեպու», Ֆուլիօ Քոտսիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 13 Դեկտեմբեր: Լուսանկարչական ցուցահանդէս «Հիտըն ձըփէն», ԵՈՒՆԵՍԿՕ, մինչեւ 30 Նոյեմբեր: Թատրոն՝ «Քամա ալ արտ, բազալիքա մին... ֆատը», ժամը 20:30ին, «Քազիմօ տիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:

ՕԴԵՐԵՒՈՅ



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 ՊԵՅՐՈՒԹ ԱՆՁՐԵՒՈՏ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵԿ՝ 22°C ԳԻՇԵՐ՝ 15°C ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 59%

ԱՉԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՂԱՋ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1953

ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՇԱՀԻՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՆ

ԹԱԳԱՒՈՐԸ 50 ՄԵՏԱՆՆԵՐ ԿԸ ՆՈՒԻՐԸ


Նոյեմբեր 11ին, Չորեքշաբթի օր Թեհրանի «Արարատ» Մշակութային Միութեան սկանդինավեան նախագահ Վաչիկ Դարբեկեանի եւ սկանդինավեան Պ. Սեւակ Սագինեանի զլխարուրութեամբ ներկայացած են Իրանի թագաւորին ու թագուհիին, Մարմարէ պալատին մէջ: Բուռն ծափերու մէջ թագաւորն ու թագուհին սրահ մտած են: Արեւուշներու կողմէ Յասմիկ Շատախունիին, իսկ արիւնքու կողմէ Արփիար Պետրոսեան, սկանդինավեան շուշանի ձեռով պատրաստուած երկու ծաղիկները յանձնած են վեհապետին ու թագուհիին: Վեհապետը անցած է արեւուշներու շարքերու առջեւ, ու շարքերումբ դիտելով անոնց կեցուածքը: Յետոյ հարցումներ տուած է «Արարատ»ի

սկանդինավեան թիւի եւ պարավմունքներու մասին: Վեհապետն ու թագուհին թէ խմած են սկանդինավեան հետ: Հայ արիւնքը թագաւորի թոյլտուութեամբ քայլերը մը երգած են, որ արժանացած է շքեմ գնահատանքի: Արմէն Աղաբեկեան երգած է Ռուբիկ Գրիգորեանի ձայնագրած եւ վեհապետին նուիրուած «Թօ էյ Փոր Գոհար» երգը: Վեհապետը հայ սկանդինավեան յանձնած է 50 մետաղներ: Վեհապետի եւ թագուհիի մեկնումէն յետոյ գոր. Փանահ յայտնած է, թէ թագաւորը շատ լաւ եւ հանելի տպաւորութիւն կրած է: Թեհրանի թերթերը գնահատական յօդուածներ գրած են հայ սկանդինավեան այս յաջողութեան առիթով:

ԱՅՍՕՐ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

- 1899.- Մահ հասարակական գործիչ եւ հրապարակագիր Տիգրան Երկաթի:
1965.- Մահ Արշակունի խոնդարեանի, Հայաստանի Ա. Ըանրապետութեան խորհրդարանի անդամ:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ն



ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ.Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ ՅԱՂԹԵՅԻՆ, ՏՂԱՔԸ՝ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ

Լիբանանի պասեթպոլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան 2003-2004 եղանակի առաջին հանգրվանի մրցումներուն, երէկ Հ. Մ. Ը. Մ.Ի ներկայացուցչական կազմը 20-0 յաղթական հաշուով հաղթեց Լիբանանի մրցակիցը՝ Սատաթա դաշտ ներկայացած չըլլալուն համար պարտուած հաշուով հաղթեց:

● ԱՂՋԻԿՆԵՐԸ Բ. դասակարգի ախոյեանութեան 3րդ հանգրվանի մրցումներուն, երէկ Շանվիլի դաշտին վրայ իր կատարած մրցումին, Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս 59-37 արդիւնքով պարտութեան մատնեց Պուլ Սթարզը եւ արձանագրեց յաղթական իր երրորդ յաղթանակը: Հ. Մ. Ը. Մ.Ի յաջորդ մրցակիցն է՝ Շանվիլը:

● ՏՂԱՔԸ Բ. դասակարգի ախոյեանութեան 2003-2004 եղանակի առաջին հանգրվանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ.Ի ներկայացուցչական խումբը պարտութեամբ սկսաւ եղանակը, երբ «Աղբալեան-Հ. Մ. Ը. Մ.» Մարզմշակութային համալիրին մէջ 69-61 արդիւնքով պարտութիւն մը կրեցին թատամոն Ջուբէն:

ԵՒՐՈ-2004Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ ՎԻՃԱԿԱԳՈՒԹԻՒՆ.

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ՝ ՆՈՅՆ ԽՄԲԱԿԻՆ ՍԷՉ



Եու. Է. Էֆ. Ա.ի պատասխանատուները՝ Կերհարտ Այկըրը (ձախից) եւ Էօգեպիօ՝ Վիճակագրութեան ընթացքին

Երէկ, Լիզպոնի մէջ (Փորթուգալ) տեղի ունեցաւ Եւրո-2004ի ֆուտբոլի մրցաշարքին վիճակագրութիւնը, որ պիտի սկսի յառաջիկայ տարի՝ 12 Յունիս 2004ին: Անիկ պիտի աւարտի Յունիս 4ին:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն 16 խումբեր, բաժնուած չորս խմբակի (իւրաքանչիւրը՝ չորս խումբ):

Վստահարար, որ բացման մրցումը պիտի կատարէ հիւրընկալ երկիրը՝ Փորթուգալ, որ Փորթուգալ մէջ պիտի ճակատի Յունաստանի դէմ: Նշենք, թէ անոր խմբակին (Ա. խմբակ) մաս կը կազմեն նաեւ Սպանիա եւ Ռուսիա:

Տիտղոսակիր Ֆրանսա, որ մաս կը կազմէ Բ. խմբակին, իր առաջին մրցումը պիտի կատարէ Անգլիոյ դէմ: Անոնց խմբակին մէջ են նաեւ Ջուրճիա եւ Նիւզլանդիա:

Գ. խմբակին մաս կը կազմեն՝ Շուէտ, Պուլկարիա, Դանիա եւ Իտալիա:

Երեք անգամ (մրցանիշ մը) այս տիտղոսին տիրացած՝ Գերմանիա, որ մաս կը կազմէ Դ. խմբակին, իր առաջին մրցումը պիտի կատարէ Հոլանտայի դէմ: Անոնց խմբակին մէջ են Չեխիա եւ Լատվիա:

Ա. հանգրվանի մրցումները տեղի պիտի ունենան Յունիս 12էն 23, քառորդ աւարտականի մրցումները՝ 24էն 27 Յունիս, կիսաւարտականի մրցումները՝ 30 Յունիսէն 1 Յունիս, իսկ աւարտականի մրցումը՝ 4 Յունիսին:

Ստորեւ՝ Ա. հանգրվանի մրցումներուն յայտագրերը:

Ա. ԽՄԲԱԿ

Փորթուգալ - Յունաստան (12 Յունիս)
Սպանիա - Ռուսիա (12 Յունիս)
Յունաստան - Սպանիա (16 Յունիս)
Ռուսիա - Փորթուգալ (16 Յունիս)
Սպանիա - Փորթուգալ (20 Յունիս)
Ռուսիա - Յունաստան (20 Յունիս)

Բ. ԽՄԲԱԿ

Ջուրճիա - Խրուաթիա (13 Յունիս)
Ֆրանսա - Անգլիա (13 Յունիս)
Անգլիա - Ջուրճիա (16 Յունիս)
Խրուաթիա - Ֆրանսա (16 Յունիս)
Ջուրճիա - Անգլիա (21 Յունիս)
Ջուրճիա - Ֆրանսա (21 Յունիս)

Գ. ԽՄԲԱԿ

Դանիա - Իտալիա (14 Յունիս)
Շուէտ - Պուլկարիա (14 Յունիս)
Պուլկարիա - Դանիա (18 Յունիս)
Իտալիա - Շուէտ (18 Յունիս)
Իտալիա - Պուլկարիա (22 Յունիս)
Դանիա - Շուէտ (22 Յունիս)

Դ. ԽՄԲԱԿ

Չեխիա - Լատվիա (15 Յունիս)
Գերմանիա - Հոլանդա (15 Յունիս)
Լատվիա - Գերմանիա (19 Յունիս)
Հոլանդա - Չեխիա (19 Յունիս)
Հոլանդա - Լատվիա (23 Յունիս)
Գերմանիա - Չեխիա (23 Յունիս)

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՉԵԼՍԻ ՅԱՂԹԵՅ ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ԵՒ ԳՐԱԻԵՑ ՊԱՐԱԳՆՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 14րդ հանգրվանի գագաթի ճակատումը, որ տեղի ունեցաւ Չելսիի եւ Մանչեսթըր Եունայթըդի միջեւ, վերջ գտաւ լոնտոնեան կապիտալ յաղթանակով, որ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Չելսիին իր հիւրը, գրաւեց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, մէկ կէտի առաւելութիւն մը ունենալով լոնտոնեան այլ կապի մը՝ Արսենալի վրայ, որ իր դաշտին՝ «Վայպերի» մէջ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Ֆուլհեմի դէմ:

«Սթեմֆորտ Պրիմ»ի մէջ տեղի ունեցած մրցումին, Ֆրանք Լամփարի կողմէ նշանակուած կողմ (30րդ փենսիթով) բաւարար եղաւ, որ Չելսի արձանագրէ եղանակի իր 14րդ յաղթանակը:

Հակառակ իր արձանագրած հաւասարութեան սակայն, Արսենալ կը հանդիսանայ միակ խումբը, որ ցարդ պարտութիւն չէ կրած:

Լիվըրփուլ արձանագրեց կարեւոր յաղթանակ մը, երբ իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Պրիմիւնիէ մը: Սթիւարտ ժերարը (35րդ փենսիթով),

Հերի Քիլը (69րդ) եւ Էմիլ Հէսթի (78րդ) նշանակեցին Լիվըրփուլի Մանչեսթըր Եունայթըդի կողմը, իսկ Ֆորսեյլի հիւր կապիտալ կողմ (33րդ):

Պուլթըն իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Էվըրթընը: Յաղթական կապիտալ երկրորդ կողմն էր շանսը կէտ Եուրի ճորքայէֆ (46րդ):



Ֆրանք Լամփար

Ստորեւ՝ 14րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները.

Արսենալ - Ֆուլհեմ	0-0
Չելսի - Մանչեսթըր Եունայթըդ	1-0
Լիվըրփուլ - Պրիմիւնիէ	3-1
Մանչեսթըր Սիթի - Միտլդէյ	0-1
Ասթոն Վիլա - Սաութհեմթըն	1-0
Պլեյքլըք - Թոթեմհեմ	1-0
Պուլթըն - Էվըրթըն	2-0
Չարլթըն - Լիծ	0-1
Փորթսմութ - Լայպըր Սիթի	0-2
Վուլվը - Նիւքեմ	1-1

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1. Չելսի	35 (28-9)
2. Արսենալ	34 (28-10)
3. Մանչեսթըր Եունայթըդ	31 (25-9)
4. Ֆուլհեմ	22 (24-18)
5. Չարլթըն	22 (20-17)
.....
16. Պլեյքլըք	14 (19-24)
17. Ասթոն Վիլա	14 (11-17)
18. Էվըրթըն	13 (15-19)
19. Վուլվը	11 (9-27)
20. Լիծ	11 (12-33)

ԲԱՆՈՒԹ

ԵՆՈՒՎ ԵՆԹՈՒՍ ԿՐԵՅ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Ֆայլիո) 11րդ հանգրվանի մրցումներուն, մեծագոյն անակազմով ստեղծեց Ինթեր Միլան, որ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Եովենթուսը, այս վերջինին դաշտին՝ «Տէլ Ալփի» մէջ տեղի ունեցած մրցումին:

Եովենթուսը, որ այս պիտի կրեց եղանակի իր առաջին պարտութիւնը, պարտութեան ճակատին դիրքէն նահանջեց երրորդ դիրքը, իր տեղը զիջելով Ա. Էս. Ռոմայի, որ իր արձանագրած յաղթանակին շնորհիւ գրաւեց առաջին դիրքը: Նշենք, թէ Ա. Էս. Ռոմայի նման 27 կէտ ունեցաւ նաեւ Ա. Մէլիան, որ իր ունեցած կողմը չէր յաջողի շնորհիւ միայն ետ կը մնայ Ա. Էս. Ռոմային:

Եովենթուս - Ինթեր Միլան մրցումին յաղթական կազմին կողմը նշանակեցին արժանի խաղողի խումբը (12րդ եւ 69րդ) եւ նիկերիացի Օպաֆեմի Մարթինս (75րդ), իսկ դաշտին տէրերուն կողմը՝ ուրուկուէյցի Փատլո Մոնթեթո (89րդ):

Ա. Էս. Ռոմայ իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Լեչէն, շնորհիւ՝ պրագիցի Մանչինի (19րդ), նորվեկիացի Ճոն Քարու (45րդ) եւ իմպայետ Ֆրանչեսքո թոթի (77րդ) նշանակած կողմերուն:

Ուքրանացի Անտոն Շեվչենքոյի կողմէ նշանակուած երկու կողմը (24րդ եւ 67րդ) բաւարար եղան, որ անոր կազմը՝ Ա. Մէլիան 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մոնթեթոն:

Ստորեւ՝ 11րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները.

Եովենթուս - Ինթեր Միլան	1-3
Սիենա - Լացիո Ռոմա	3-0
Ա. Մէլիան - Մոտենա	2-0
Փարմա - Քիեւո	3-1
Փերուցիա - Էմփոլի	1-1
Ռեյնոս - Պուլոնցիա	0-0
Ա. Էս. Ռոմա - Լեչէ	3-1
Սամպորիա - Անցոնա	2-0
Պրեշիա - Ուտինեզե	1-2

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1. Ա. Էս. Ռոմա	27 (25-4)
2. Ա. Մէլիան	27 (20-4)
3. Եովենթուս	26 (26-12)
4. Ինթեր Միլան	22 (20-6)
5. Փարմա	21 (19-11)
.....
14. Լեչէ	8 (12-24)
15. Պուլոնցիա	7 (9-17)
16. Փերուցիա	7 (14-23)
17. Էմփոլի	6 (7-23)
18. Անցոնա	4 (5-21)

ՊԱՇՏԱՆՆԵՐԸ
LOUՒԻ 2004 ՏԱՐՈՒԱՆ
ՕՐԱՅՈՅՅԸ
«ՅԱԲԵՐԺԱԿԱՆ ԸԱՅԱՍՏԱՆ»
ԹԵՄԱՅՈՎ

Հ.Բ.Մ. - Մ.Կ.Ն. ԻՆՍՏԻԿՆԵՍՆԵՐԻՆ

ԼՈՒՍԱՔԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ
ՀԱՐՅԱԿԱՆԵՐՈՒ ԴԻՄԱՅ

Խօսք կ'առնեն
ԸԱՅՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՒՆԵԱՆ ՊՐՆ. ՍԿՐՏԻՉ Լ. ՊՈՒՄՏՈՒԹԵԱՆ ՊՐՆ. ԱՐՄԵՆ ԻՐՆԵՇԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003, Երեկոյեան ժամը 8:00ին, Ե.Ե.Ը.Ի Անդրանիկ - Սեւան ակումբի «Չապլի Մովսէսեան» կեդրոնի սրահին մէջ, Ըրըշ Թապաթ:

ՀՐԱԲԵՐ

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅ - ՓԱՐԻԶ ՍԵՆ ԺԵՐՍԵՆ՝ 0-1

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 15րդ հանգրվանի մրցումներուն, Մոնաքօ աւելիով ամրապնդեց պարագլուխի իր դիրքը, երբ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Նանթի դաշտէն, այսպիսով արձանագրելով եղանակի իր 11րդ յաղթանակը: Լուքաս Պետենարտի կողմէ նշանակուած կողմ (76րդ) բաւարար եղաւ, որ իշխանապետական կազմը վեց կէտի առաւելութիւն մը ունենայ երկրորդ դիրքը գրաւող Լիոնի վրայ, որ 3-1 արդիւնքով պարտուած հեռացաւ Ռէնի դաշտէն (14րդ):

15րդ հանգրվանի գագաթի ճակատումը, որ տեղի ունեցաւ Մարսէյի եւ Փարիզի Սեն Ժերմէնի միջեւ, առաջինին դաշտին՝ «Վելտորոմ» մէջ, վերջ գտաւ Փարիզի Սեն Ժերմէնի յաղթանակով, 1-0 արդիւնքով:

Օքսֆոլդ կրեց եղանակի իր վեցերորդ պարտութիւնը, երբ 3-2 արդիւնքով պարտուած հեռացաւ Սոչոյի դաշտէն: Յաղթական կազմին կողմը նշանակեցին՝ Ֆրո (6րդ) եւ Տոս Սանթոս (17րդ եւ 44րդ), իսկ Օքսֆոլդի կողմը՝ Սիս (70րդ եւ 75րդ):

Պասիլիա պարտութեան մը փրկուեցաւ, երբ Պորտոյի դէմ իր կատարած մրցումին վերջին վայրկեանին նշանակեց իր հաւասարութեան կողմ (1-1):

Ստորեւ՝ 15րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները:

Ռեյնց - Լիոն	3-1
Ամպրիո - Թուլուզ	2-1
Լը Մանս - Մոնփելիէ	4-0
Նանթ - Մոնպո	0-1
Նիս - Մէս	1-1
Սթրասբուրկ - Լիլ	2-2
Պորտո - Պասիլիա	1-1
Լանս - Կեմկալ	3-1
Սոչո - Օքսֆոլդ	2-2
Մարսէյ - Փարիզ Սեն Ժերմէն	0-1

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

1.- Մոնաքօ	36 (28-12)
2.- Լիոն	30 (29-12)
3.- Մարսէյ	27 (22-14)
4.- Փարիզ Սեն Ժերմէն	27 (18-11)
5.- Սոչո	27 (22-16)
6.- Լանս	25 (14-20)
.....
16.- Մէս	15 (12-16)
17.- Լիլ	15 (15-21)
18.- Կեմկալ	11 (13-25)
19.- Լը Մանս	11 (12-26)
20.- Թուլուզ	10 (10-25)

ՊՈՔԱ ԺՈՒՆԻՈՐԶ՝ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆ



Պոքա ժունիորգի մարզիկները կը տօնեն իրենց յաղթանակը

Այս տարուան սկիզբը Հարաւային Ամերիկայի Լիպթաթաորէս բաժակը շահած Պոքա ժունիորգ անցաւ չարաթափերին շահեցաւ Արժանթինի ֆուտբոլի ախոյեանութիւնը (Ափերթիւրա), երբ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Արսենալը:

Պոքա ժունիորգ, որ յառաջիկայ Դեկտեմբեր 14ին թոթիոյ մէջ, ֆուտբոլի Միջամաքամասային ֆուտբոլի մրցաշարքին պիտի ճակատի Ա. Մէլիանի դէմ, թէեւ 20րդ անգամ ըլլալով շահեցաւ երկրին ախոյեանութիւնը, սակայն անոր յետեւ մրցակից՝ Ռիվըր Փլէյթ իրմէ 11 անգամ աւելի շահած է այս տիտղոսը:

ՇԻՐԱԿ
ՏՊԱՐԱՆ • ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒՆ

Առևտրական Տպագրութիւն
Այցեորմներ - Լամակի Թուրքեր - Պահարաններ
Թոուցիկներ - Հաշուեցոյցներ - Ստացագիրներ
Որձագրներ - Պիտակներ - Կնիքներ - Եւլն.

Միութենական եւ Դպրոցական Տպագրական Աշխատանքներ
Յայտագիրներ - Հրահրատմներ - Օրացոյցներ
Վիճակցոյցներ - Վկայականեր - Տարբերակներ
Պարբերաբարներ - Եւլն.

Հարսանական Զարտերու Ճոխ Հաւաքածոյ

Հարպոյեան Կեդրոն • Bloc C • Պուրճ Համուտ • Հեռ. 01 253008

ԲՅԱՆՈՒՅՑՈՒՄ ԱՍՏՈՒՄ ԱՍՏՈՒՄ ԱՍՏՈՒՄ

ԵՆՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՆԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

ՊԵՏՔ ԶԵ ԴՈՒՌ ՓԱԿԵԼ ԹՈՒՐԲՈՅ ԱՌՁԵՒ

Կ'ԸՍԷ ԵՆՇԻՔԱ ՖԻՇԸՐ



Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչքա Ֆիշըրը շարքավերջին դարձեալ կոչ ուղղած է Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան ճիգերը չանտեսելու:

«Պետք է Ե. Միութեան դուրս բաց ձգել Թուրքիոյ առջեւ», ըսած է ան գերմանական Տրեստըրն քաղաքին մէջ «Կանաչներու» Կուսակցութեան տարեկան համագումարին:

«40 տարիէ ի վեր խոստումներ կը տրուին Թուրքիոյ եւ հիմա որ Թուրքիա բարեկարգումներու ծրագիրի մը ձեռնարկած է եւ հաւրեակչութիւնը Պոլսոյ մէջ հարիւրաւոր զոհեր խլած է, «պէտք է Թուրքիոյ համար Եւրոպայի դռները բաց ձգենք», ըսած է ան:

Ֆիշըրը, որ Գերմանիոյ «Կանաչներուն» անպաշտօն դեկավարն է, յայտնած է, թէ Ե. Միութեան շահերը կը պահանջեն, որ անիկա այս քաղաքականութիւնը որդեգրէ: Ան կոչ ուղղած է կուսակցութեան անդամներուն, որ «Թուրքիոյ հարցով ուղղակիօրէն պաշտի եւրոպական ընտրութեանց կապուած իրենց ընտրաբաշտի ընթացքին: Ընտրութիւնները Յունիս 2004ին պիտի կայացուին:

Ան նաեւ յայտնած է, որ անոնք պէտք է պայքարին Գերմանիոյ մէջ այն անձերուն դէմ, որոնք երկրին մէջ հանրային կարծիքը Թուրքիոյ անդամակցութեան դէմ կ'ուղղեն դարձնել: Գերմանիոյ մէջ մեծ թիւով թուրքեր կ'ապրին:

Ֆիշըրը անցեալ Երկուշաբթի օր Թուրքիա այցելութեան մը ընթացքին կոչ ուղղած է Անգարայի թափ տալու ժողովրդավարական բարեկարգումներուն եւ խոստացած Ե. Միութեան անդամակցութեան ճիգերուն պորպիզ կանգնել:

(ԱՅՓ)

- 1... Էg2+ 2. Էxg2 Էxg2# 0-1
1... Էg1+ 2. Էe2 Էd3# 0-1
1. Էxh7+ Էf8 2. Էe6# 1-0
1... Էd1+ 2. Էe3 Էd3# 0-1

ԹՈՒՐԲՈՅ ՓՈԼԱԹ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԸԱՐՑԱՔՆՆՈՒԻԼ

Թուրքիոյ մէջ մարդ մը, որ ըստ իշխանութիւններուն՝ հրահանգած է Պոլսոյ մէջ երկու սինակոններու դէմ անձնասպանական գործողութիւնները, Շարք օր մը քառասուն-

Եռսուֆ Փոլաթ կը կոչուի: Ան կրնայ ցկեանս քանտարկութեան վճիռ ստանալ:

Յարգ անձնասպանական գործողութիւններուն կապակցութեամբ 18 ալ կասկածելիներ ամբաստանուած են «ապօրինի կազմակերպութեան մը պատկանելու կամ օժանդակելու» յանցանքով:

Փոլաթ ձերբակալուած է Նոյեմբեր 25ին Իրանի հետ սահմանին վրայ: Անոր մօտ կեղծ անցագիր մը գտնուած է:

Ըստ ապահովութեան մարզի աղբիւրի մը, հե-

տաքննութիւնները ցոյց տուած են, թէ ան հրահանգած է գործողութիւնը ընթացքի մէջ դնել՝ անոր վայրը մեկնելով պայթուածներէն քանի մը վայրկեան առաջ:

2 սինակոններուն դէմ գործողութիւնները 27 գոհ եւ հարիւրաւոր վիրաւոր խլած էին: 5 օր ետք, բրիտանական 2 կեղծներուն դէմ անձնասպանական գործողութիւնները 32 գոհ խլած էին:

Պայթուածներէն ի վեր աւելի քան 50 հոգի ձերբակալուած է:

(ԱՅՓ)

«ՀԱՅ ԴԱՏԻ ԴԻՄԱԳՐԱՒԱԾ ...»

Շարունակուած Յրդ էջէն



Կենդանի պատկերէն պահ մը

յուն կացութեան հետեւանքով պանակաւ վտանգներու դէմ յանդիման կը գտնուի եւ Հայաստանն ու Սփիւրքը պէտք է ամէն ձեւով գործեն այս ուղղութեամբ:

Հայ Դատի դիմագրուած մարտահրաւերներու կարգին Յ. Բագրատունի շեշտը դրաւ մտահոգի երեւոյթի մը հայութեան կողմէ դէպի Թուրքիա անխռնեմօրէն «բացելուն» վրայ, նշելով թրքական արտադրութիւններ քաջալերելը, հայկական հողեր այցելելու պատրուակով դէպի Թուրքիա պրօքսիւրա մարտահրաւերներուն դէմ կենսական կոչուած է հայ երիտասարդութիւնը, հաս-

տատեց բանախօսք, որովհետեւ ան կրնայ մերժել իր դիմաց ցցուող մարտահրաւերները, մերժել ստուն ու կեղծիքը ու պայքարի հակահայ բոլոր երեւոյթներուն դէմ մեծ համոզումով, վճռականութեամբ եւ միակամ կեցումով:

1915-1965 ժամանակահատուածը ճանչըրուած է իբրեւ հայապահպանման շրջան, դիտել տուաւ Յ. Բագրատունի եւ նշեց, թէ այսօր եւս կարծէք նոյն հրամայականին դիմաց կը գտնուի հայ ժողովուրդը, որովհետեւ ան Հայկական Յեղասպանութեան երկար տարիներ ետք պարպուած է իր հայկականութենէն: Այսօր աւելի շեշտուած է հայապահպանման ինդիքը, դիտել տուաւ բանախօսք, որովհետեւ այսօր քաղաքականու-

թիւնը շատ արագ կերպով կը փոխուի, եւ պէտք է ամէն վայրկեան պատրաստ ըլլալ հայութեան ձայնը լսելի դարձնելու եւ Հայ Դատը պաշտպանելու՝ վտանգելով միայն անձնական ուժերուն: Իր խօսքը եզրափակելով Յակոբ Բագրատունի հաստատեց. «Այսօր կա մտնեալը հայեր կ'ըլլանք, կա միայն չեմք ըլլալ. այսօր կա մտնեալը որքէն Հայաստանն ու հայութիւնը կը պաշտենք, կա միայն ինչ կրնանք ստոնալ»:

Հ.Յ.Դ.ԼԵՄԻ «Հրայր Դժոխք» մասնաճիւղի եւ «Ապատամարտ» Պատանեկան Միութեան կողմէ ներկայացուած կենդանի պատկերէն ետք, ձեռնարկը փակուեցաւ «Մարդարապատ» յաղթերով:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբանանեան Համալսարանի դիմագրուած դժուարութիւններն ու դասադուր, նախագահական ընտրութիւններուն առնչութեամբ շրջան ընող լուրերն ու տարածախոսքները կը հանդիսանան լիբանանեան օրաթերթերուն տեղական գլխաւոր լուրերը:

Շրջանային եւ միջազգային գետնի վրայ, իւրաքանչեւ ան ուժերուն կողմէ պահովութեան պատի կառուցման աշխատանքներու շարունակութիւնը, բնական վայրերուն առնչութեամբ Շարունի կողմէ նոր ծրագիրներու ներկայացումը, Իրաքի մէջ տեղի ունեցող յարձակումներն ու անոնց իրրեւ բողոք կազմակերպուող ցոյցերը, ամերիկացի դիւանագետներու այցելութիւնը Իրաք կը կապեն լիբանանեան օրաթերթերուն գլխաւոր լուրերը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԱՆԸ

«Նահար» գրած է, թէ պաշտօնական վիճակագրութիւնը մը հաստատած է նախագահ Լահուտի իշխանութեան երկարաձգումը: Ըստ թերթին, Լիբանանեան Համալսարանի դասադուրին անտեսուող անտէր պիտի ձգէ 70 հազար ուսանող: «Անուար» դիտել տուած է, թէ լիբանանեան կեանքի բոլոր բնագաւառները ստոնած են, բացի իշխանապետերու շահէրէն: Ընտրական փոքրիկները կը խաղան երկարաձգման հարցին հետ, իսկ երկարաձգման ընտրանքը ինքզինք կը պարտադրէ: Թերթը անդրադառնալով Լիբանանեան Համալսարանի հարցին գրած է, թէ դասադուրը կը շարունակուի, ուսուցիչները կը սպառնան բաց դասադուր կատարել, ուսանողները իրենց դասերէն կը վրկուին, իսկ իշխանաւորները ոչ մէկ ձեւով կը հակապրեն: «Տիար» գրած է, թէ նախագահ Լահուտ հաստատեց, որ նախագահական ընտրութիւնները իր միտքէն չեն անցնիր: Ըստ թերթին, հակառակ շրջան ընող տարածախոսքներուն, կատարութեան փոփոխութիւնը բացառուած է ներկայիս, իսկ Լիբանանեան Համալսարանի դռները տակաւին կը շարունակեն փակ մնալ: «Քիֆաի Արապի» նշած է, թէ հակառակ անոր որ Սուրիա կը մտնէ չխօսիլ նախագահական ընտրութեան հարցով, վիճակագրութիւնը մը ցոյց կու տայ, որ 37,1 առ հարիւր կը նախընտրէ Լահուտի վերահաստատումը: «Սաֆիր» դիտել տուած է, թէ պաշտօնական կողմերու լուրերուն լոյսին տակ «լիբանանեան» հարցը աւելի կը բարդանայ: Ուսուցիչներու եւ 75 հազար համալսարանականներու ձակաւազիրը վտանգուած է:

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳՆԱՊ

«Անուար» գրած է, թէ Քորթի Ամմանի մէջ հանդիպում պիտի ունենայ Պըրնպի հետ՝ խաղաղութեան ձաճորտ քարտէսը վերակենդանացնելու նպատակով: Ըստ թերթին, Աման յայտարարած է, թէ իւրայեւեան պատը կը հակադրուի խաղաղութեան գործընթացին: «Նահար» նշած է, թէ Լոնտոնէն ետք պաղեստինեան տագնապը քննարկուեցաւ Մատրիտի մէջ, իսկ Աման կը քննադատէ Իւրաքի իշխանը: Ըստ թերթին, Շարուն կը ծրագրէ Այւրրոդանանէն բնակեցման կարգ մը վայրերը ներառնել եւ ուրիշներ քանդել: «Սաֆիր»ի համաձայն, Կապալի մէջ նոր նահապետ մը կ'արձանագրուի իւրայեւեան փամփուշտով: Աման կը յայտարարէ, որ Իւրաքի բռնաբարեց ապահովութեան պատի շինութիւնը կատեցնող որոշումը:

ԻՐԱԼԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

«Նահար»ի համաձայն, ամերիկացի ժողովրդավարականներ կը քննադատեն նախագահ Պուշի գաղտնի այցելութիւնը Պաղտատ, նշելով, որ այս մէկը ցուցանիշ է երկրին մէջ տիրող անպահով կացութեան: Միւս կողմէ, Ռայս պաշտպանելով անոր այս այցելութիւնը ըսած է, թէ նախագահական այցելութիւնները բնականաբար խիստ ապահովութիւն կ'ենթադրեն: Թերթը նշած է, թէ Իրաքի իշխող խորհուրդը կը քննարկէ Սիւթանի պահանջները, իսկ Ռաշիդ կը ըստատէ, որ ընտրութիւնները տեղի պիտի ունենան Յունիսին: «Նահար» դիտել տուած է, որ Իտալիա բացայայտեց անձնասպանական գործողութիւններ կատարող իսլամական խմբակցութիւն մը, որ կը մասնակցէր Իրաքի պայթումներուն: «Անուար»ի համաձայն, Պաղտատի մէջ իրթոններով յարձակումներ տեղի ունեցած են եւ նամակ փոխադրող օդանավ մը թիրախ դարձած: Թերթը անդրադարձած է այն երեւոյթին, թէ Պուշի այցելութիւնը Իրաք կը հանդիպի բուռն քննադատութիւններու:

Ըստ «Տիար»ի, Պուշին ետք Հիլըրի Բլինթըն կը յայտնուի Պաղտատի մէջ, Փաուրը կ'ակնարկէ ՄԱԿի յայտնալ իրաւաստիութիւններ տալու հաւանականութեան եւ իշխանութեան փոխանցման համար անընթաց դասադուրներու համար տարուելիք նախապատրաստական աշխատանքին: «Սաֆիր» գրած է, թէ Իրաքի իշխող խորհուրդը երկփեղկուած է, իսկ Պուշի կառնած կը մնայ իր ճշդած օրացոյցին: Ըստ թերթին, Ռաշիդ կը պնդեցաւ Սիւթանի վերջին:

Ըստ «Քիֆաի Արապի»ի, Ամերիկա որոշ կարեւորութիւն կ'ընծայէ Սիւթանի պահանջներուն՝ քաղաքական տագնապի մը առաջը քանցելու համար: «Լիուս» գրած է, թէ «գաղտնի այցելութեան» ուրակներ կը հալածէ նախագահ Պուշի Ռաշիդ կը ըսէ մէջ:

ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

«Անուար» գրած է, թէ թունուցի երգչուհի Չքրա, անոր քարտուղարն ու աշխատանքներու պատասխանատուն սպանուած են երգչուհիին ամուսնոյն կողմէ, որ ապա անձնասպան եղած է: Ըստ թերթին, բրիտանական ոստիկանութիւնը քննութեան մը ընթացքին պայթուցիկ նիւթեր կը գտնէ տան մը մէջ եւ անոնց վերջեր կը ձերբակալէ «Քալիտա»ի հետ կապ ունենալու յանցանքով: «Տիար»ի համաձայն, Վրաստանի ընտրութիւնները կը յատկանշուին իրենց անորոշութեամբ, իսկ Մոսկուա կը դիտէ որոշ վզուաորութեան մը ելքը:

Advertisement for AFHIL medical equipment. Includes text: 'RENT AND SALE', 'AT HOME', 'Wheelchair', 'Walker', 'Electric Bed', 'Manual Bed', 'Water Mattress', 'Cans', 'Sticks', 'Serum Tripod', 'Walking Frame'. Also mentions 'HOME MEDICAL EQUIPMENT SERVICES' and 'Over Bed Table', 'All Kinds Of Oxygen', 'Laboratory service', 'Physiotherapist', 'Nurses Aids', 'P.T.S. (AMBULANCE)'. Contact info: 301355000 «Արին» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆԵԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԸ, Բ. ՅԱՐԿ (ԵՆ. 001) 242553/7. NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

Advertisement for Tapilama. Features an image of a heart-shaped object and text: 'In Love with Tapilama'. Includes a table of prices: 7 տողարէն սկսեալ, 15 տողարէն սկսեալ, 25 տողարէն սկսեալ, 45 տողարէն սկսեալ, 3 տողարէն սկսեալ. Also mentions 'ՓԱՐԵԷ 15 տարուան ամբողջական երաշխաւորութեամբ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՎ, ԱՌԱՆՑ ՏՈՎՈՍԻ ԵՒ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ' and 'Պուրճ համուտ, Անթիլիաս, Պատարո, Սարպա, Թրիփոլի, Ֆօպուր Թրիփոլի, Տրակաթոր Քորայթեմ Դեմ: 09-640179 եւ 03-490555'.